Այդ մարդկանց աշխատավարձը անգամ ավելի բարձր է դրսում, եւ այնպես չէ, որ մարդիկ խանդավառված կգան, որ էստեղ իր ձեռքի տակ աշխատեն: Պետք է կառավարության ղեկավարին փոխել եւ էնպիսի մարդ դնել, որը գնահատում է գիտելիքով մարդուն եւ կարիքը զգում է, այդ ժամանակ նոր այս մարդիկ կգան Հայաստանում աշխատելու:

Կարդացեք՝ էջ 4

ԿԸՀ պատմության մեջ Վահագն Հովակիմյանի անունը գրվեց որպես այդ կառույցի առաջին նախագահ, ով չի կատարել, ավելի ճիշտ, քամահրել է ՀՀ դատարանի որոշումը՝ վիճելի տեղամասերում վերաքվեարկություն իրականացնելու մասին: Դու քանի՞ գլուխ ունես, Վահագն Հովակիմյան, որ քեզ վեր դասես ու դատարանի վճիռը չկատարես:

Կարդացեք՝ էջ 5

Փաշինյանը տեսավ, որ հասարակության առնվազն կեսը, իրականում՝ ավելի մեծ մասը, վստահության քվեն տվեց Սամվել Կարապետյանի, Ռոբերտ Քոչարյանի, Գագիկ Ծառուկյանի կուսակցություններին, չլինեին իր կազմակերպած ընտրակեղծիքները եւ բռնաճնշումները, նրանք ստացել էին մեծամասնություն եւ ձեւավորել էին կառավարություն:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 96 (4231), 16 հունիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Հեռացող խորհրդարանն այսօր կմեկնարկի իր վերջին հերթական նիստերը, եւ գործող պատգամավորներից շատերը հրաժեշտ կտան կոմֆորտ վիճակին՝ հինգ տարի գրեթե ոչինչ չանելու եւ միլիոններ վաստակելու արտոնյալ կյանքին: Իհարկե, կլինեն արտահերթ նիստեր, «տանը մնացած» նախագծերը չեն ժառանգի հաջորդ խորհրդարանին՝ կաշխատեն ավարտին հասցնել: Նոր խորհրդարանի աշխատանքների մեկնարկի ժամկետն էլ, ի դեպ, խիստ անորոշ է: Չնայած, ըստ կարգի, նոր խորհրդարանի անդրանիկ նիստը պետք է մեկնարկի օգոստոսի 2-ին, սակայն հաշվի առնելով, որ ընդդիմությունն ընտրությունների արդյունքները որոշել է վիճարկել Սահմանադրական դատարանում, ուստի, դատական գործընթացներով եւ ժամկետներով պայմանավորված, հնարավոր է այդ օրը փոխվի: ՍԴ դիմելու վերջնաժամկետը հունիսի 19-ն է, եթե բարձր դատարանն արագացված ընթացակարգով քննի ընդդիմության հայտը, ինչն ամենահավանական սցենարն է, որպեսզի դատարանի որոշումը հետեւանքներ չունենա՝ մարդիկ ամառային հանգիստը վայելելիս լինեն, եւ փողոց դուրս եկող ու ընդվզող չլինի, ապա նորընտիր երեսփոխանները հուլիսի վերջին մանդատները կստանան, եւ օգոստոսի 2-ին կլինի անդրանիկ նիստը: Նախորդ խորհրդարանն էլ է օգոստոսի 2-ին մեկնարկել: Հենց առաջին չընդհատվող նիստում ԱԺ-ն վարչապետ կընտրի: Իսկ բուն աշխատանքները կսկսվեն սեպտեմբերի 14-ից: Ի դեպ, հեռացող խորհրդարանի պատգամավորները մեծ պարգեւավճարի ախորժակ ունեն, չնայած որ ամիսներ առաջ են մոտ 3-ական միլիոն պարգեւավճար ստացել:

Պաշտպանական գերատեսչությունը, որ պարտադիր կարգով վարժական հավաքների է տանում քաղաքացիներին, հաճախ էլ այդ գործընթացը մահակ դարձնում ընդդիմադիրների գլխին, նույն պարտաճանաչությամբ չի վճարում հավաքների մասնակիցներին: Մենք բազում ահազանգեր ենք ստանում, որ մայիսի հավաքի մասնակիցներից շատերին մինչ այս պահը գումարներ չեն փոխանցվել, ասվել է, որ փոխանցումն ուշացումով կլինի: Իսկ մինչ գումարը փոխանցելը զինվորական գրքույկները պահում են զորամասերում, ինչից քաղաքացիներն ավելի են մտահոգված: Փորձեցինք ՊՆ-ից պարզաբանում ստանալ, սակայն մեր զանգերն անպատասխան մնացին:

Հայկական սցենարը

Պետք է խոստովանենք, որ այս իշխանությունն ինչքան անմիտ ու անպատասխանատու է պետական հարցերի լուծման ժամանակ, նույնքան ճկուն ու պատասխանատու է իր վերարտադրությանը եւ իր շահերին վերաբերող հարցերում: Սա առաջին անգամը չէ, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը վարպետորեն հաղթահարում է իրեն ուղղված գոյաբանական ճգնաժամերը: Ինքնապաշտպանական խելք ու բնազդ ունեն կամ էլ՝ լավ խորհրդատուներ: Ինչ ասես արժեին Սահմանադրական դատարանի կազմը փոխելուն ուղղված խորամանկությունները, որոնք գործի դրվեցին՝ առանց սահմանադրական հանրաքվե անելու, չնայած օրենքը դա էր պահանջում: Կամ 2020 թ. պատերազմից հետո, երբ ողջ հասարակությունն իր հրաժարականն էր պահանջում, ինչպես կարողացավ համոզել-խաբել-ճնշել մարդկանց եւ վերընտրվել: Կամ՝ Արցախի հանձնումից հետո ամենաբնական ելքն այն էր, որ պետք է նման աղետ հայ ժողովրդին բերած ղեկավարը հեռանա, իսկ նա գտավ մեղքն ուրիշների վրա բարդելու եւ իշխանությունը ձեռքից բաց չթողնելու հնարը: Այս անգամ էլ հանրությանը մանիպուլացրեց, մոլորեցրեց, մոտիվացրեց ու մի կերպ հաղթանակ կորզեց: Եվ երբ հասարակությունը բոլորովին այլ տեղում էր փնտրում վտանգները, երբ թվում էր՝ կա հանրային կոնսենսուս, որ նա պետք է հեռանա, պետական բոլոր ռեսուրսները, մարդկային խորամանկության բոլոր դրսեւորումները, արտաքին ու ներքին աջակցության բոլոր հնարավորությունները մոբիլիզացրեց ու տեռորով, վախեցնելով, սպառնալով՝ քվեներ կորզեց իրենից ազատվել փորձող հանրությունից: Մենք կարծում էինք, որ մոլդովական սցենարը գործի կդնի՝ ընտրություններից առաջ մրցակիցներին կհեռացնի, իսկ նա ընտրախախտումների «հայկական սցենար» գործարկեց՝ մի քանի տեղամասում չեղարկելով ընտրությունները ու մի ողջ կուսակցություն խորհրդարանից դուրս մղելով:

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի վաղեմի թիմակից Միքայել Մելքումյանը, ըստ որոշ տեղեկությունների, խզել է կապերը կուսակցության հետ, հեռացել ԲՀԿ-ից: Մելքումյանը, որ Ծառուկյանի առաջնորդած կուսակցության նախընտրական ցուցակում 13-րդն էր եւ այն եզակի կուսակցականներից, որին իշխանափոխությունից հետո Ծառուկյանը պահել էր կողքին, նաեւ իր հեռուստաընկերությամբ հաղորդում էր վարում: Թե ինչն է ԲՀԿ-ին այս նեղ պահին թողնելու պատճառը, մեզ ասացին, որ վախեցել է իշխանության մահակից, որ իրեն էլ կհեռացնեն Տնտեսագիտական համալսարանից, որտեղ դասավանդում է: Գուցե նաեւ պարտադրել են, որ կուսակցությունից հեռանալու որոշում կայացնի: Երեկ մեզ չհաջողվեց ԲՀԿ-ից մեկնաբանություն ստանալ, Մելքումյանն էլ արձագանքեց մեր զանգին, լսեց հարցը, բայց չպատասխանեց՝ ասելով, որ համալսարանում քննություն է վերցնում ուսանողներից: Խնդրեցինք՝ գոնե հաստատել կամ հերքել՝ հեռացել է ԲՀԿ-ից, բայց Մելքումյանն անդրդվելի մնաց:

ՍԻՓԱՆ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵ՞Տ

Իջեւանյան իշխանական շրջանակներում խոսում են այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի մեծ եղբոր՝ Արտակի որդին՝ ԱԺ նախկին պատգամավոր Սիփան Փաշինյանը, նշանակվելու է Տավուշի մարզպետ: Նա նախորդ գումարման պատգամավոր էր, որից հետո Ուկրաինայում զբաղվում էր գործարարությամբ, բայց նախընտրական քարոզչության շրջանում ժամանել էր Հայաստան՝ հորեղբոր վերընտրվելուն աջակցելու: Նա անգամ մարզեր էր գնում, քարոզչություն անում, եւ մի գյուղում՝ տեսանյութերից մեկում հենց նրան էր գյուղացիներից մեկն ասում՝ ներողություն խնդրելով չի լինի, դրանով ձեր արածների հետեւանքները չեք մաքրի: Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր Հայկ Ղալումյանը, հիշեցնենք, Տավուշի մարզպետ է աշխատում 2021թ. ապրիլի 8-ից: Նա մայիսի 8-ից գտնվում էր նախընտրական արձակուրդում, ՔՊ-ի օգտին քարոզչություն էր անում: Հունիսի 8-ից հետո Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում Հայկ Ղալումյանի ոչ մի որոշում չկա, նրա մասնակցությամբ որեւէ միջոցառում, ժողովի վերաբերյալ տեղեկատվություն զետեղված չեն: Նա ՔՊ ընտրացուցակի 49-րդ համարն է, իսկ ՔՊ-ն 64 մանդատ է ստանում:

ՉԵՂԱՐԿՈՒՄ

ԻՆՉՈՒ ԿԸՀ-Ն ՉԿԱՏԱՐԵՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Եվ այսպես, ամեն ինչ արվեց ԲՀԿ-ին մադատներից զրկելու եւ ՔՊ-ին սահմանադրական մեծամասնություն շնորհելու ու հետագայում բոլոր պաշտոններում միանձնյա նշանակումներ անելու համար: Ձայների վերջնահաշվարկի եւ բաշխման արդյունքում ԿԸՀ-ն որոշեց նոր խորհրդարանի կազմը. ՔՊ՝ 64, «Ուժեղ Հայաստան»՝ 29, «Հայաստան» դաշինք՝ 12 մանդատ:

Երեք տեղամասում, որտեղ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվել, վերաքվեարկություն չնշանակվեց, քանի որ ընտրողը, ըստ ԿԸՀ-ի, կարող է խմբագրել իր վերաբերմունքը ուժերին, վերջնական արդյունքը հաշվի առնելով: «Ընտրողի կամքը կարող է ձեւավորվել ոչ թե իր սկզբնական քաղաքական նախապատվությամբ, ազատ կամարտահայտությամբ, այլ արդեն հայտնի արդյունքը խմբագրելու հաշվարկով»,- ասված է հայտարարության մեջ: Այսինքն, ԲՀԿ-ն վերաքվեարկության արդյունքում կարող է անցնել խորհրդարան, ինչն իրենք չեն կարող թույլատրել: Ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչները լքեցին ԿԸՀ դահլիճը եւ հայտարարեցին, որ պաշտոնական արդյունքները չեն արտացոլում ժողովրդի կամքը: «Ուժեղ Հայաստան», «Հայաստան» դաշինքներն ու ԲՀԿ-ն դիմելու են ՍԴ: «Փաստացի, 3 ընտրատեղամասերի արդյունքները չեղարկվեցին, անվավեր ճանաչվեցին, եւ այս քաղաքացիներին թույլ չեն տալիս վերաքվեարկելու եւ իրենց կամքն արտահայտելու»,- լրագրողներին ասաց «Ուժեղ Հայաստան» դաշինքի անդամ Գոհար Մելոյանը՝ շեշտելով, որ մոտ 60 հազար ձայն արհեստականորեն «դուրս թողնվեց խաղից»:

«Պայքարն այժմ տեղափոխվում է ՍԴ եւ արդյունքի կիասնի միայն այն դեպքում, երբ հասարակության ընդդիմադիր հատվածը բացարձակ մոբիլիզացնի իր բոլոր ուժերը, այլապես մենք դատապարտված ենք լինելու թրքամետ բռնատիրության ներքո եւս մի քանի տարիների»,- գրել է «Հայաքվե» նախաձեռնության համակարգող Ավետիք Չալաբյանը: «Եթե Սահմանադրական դատարանը եւս հաստատի ԿԸՀ որոշումը եւ 2026 թ. Ազգային ժողովի ընտրությունների վերջնական արդյունքների վերաբերյալ ընդունի ակնհայտ ապօրինի որոշում, ապա դրանով ոչ թե կփակի հարցը, այլ կխորացնի իշխանության լեգիտիմության ճգնաժամը եւ կհզորացնի գործող իշխանությունների հեռացման վերաբերյալ հանրային ու քաղաքական պահանջները»,- գրել է ՀԱԿ անդամ Արտակ Առաքելյանը:

Անգամ այնպիսի գործիչները, որոնք ողջունել են 2018 թ. հեղափոխությունը, այսօր կարկամել են: Արցախցի քաղաքագետ Էդուարդ Գրիգորյանը համոզված է, որ այս որոշումն ազդելու է Հայաստանի միջազգային վարկանիշի վրա: «Որոշումը վտանգի տակ է դնում նաեւ 2018-ի հիմնական ձեռքբերումներից մեկը՝ ազատ եւ արդար ընտրությունների ինստիտուտը եւ հասարակության վստահությունը դրա նկատմամբ»,- գրել է նա:

Ինչ պետք է անի ընդդիմությունն այս իրավիճակում՝ վերցնի՞, թե՞ չվերցնի մանդատները: «Ազատություն» կուսակցության նախագահ, ՀՀ նախկին վարչապետ **Հրանտ Բագրատյանը**, որն աջակցել է «Ուժեղ Հայաստանին», կարծում է, որ անպայման պետք է վերցնել մանդատները: «Մանդատները պարտադիր պետք է վերցնեն, որ պայքարեն: Մանդատ չվերցնելը նշանակում է, որ Շնորհապետական կուսակցությունը, Արամ Զավենի Սարգսյանը կգնան, կդառնան դեպուտատ: 500 հազար մարդ իրենց ձայն է տվել: Այդքան մարդու ձայն շպրտում են, դռուրս են գալիս: Ո՞նց կարելի է նման բան անել: Թող գնան, պառլամենտում պայքարեն, եթե ունեն ուժ, թափ, կրթություն, մակարդակ»:

Նախկին պատգամավոր, փաստաբան **Զարուհի Փոստանջյանը** կարծում է, որ ԿԸՀ նախագահը քրեորեն պատժելի արարք է կատարել եւ պետք է պատասխանատվության ենթարկվի: Նա հրապարակավ դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ հայտնելով, որ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸՀ վերջնական որոշումը՝ առանց անվավեր ճանաչված 3 ընտրատեղամասերում վերաքվեարկության, բացահայտ ապօրինի է. «ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի հրապարակային պարզաբանումները, թե վերաքվեարկությունը կարող է հանգեցնել «տակտիկական քվեարկության» (tactical voting) եւ խեղաթյուրել ընտրողների կամքը, զուրկ են իրավական որեւէ հիմնավորումից եւ հանդիսանում են քրեորեն պատժելի արարքի քողարկման ձախողված փորձ»: Հիմնավորումն այն է, որ կա ՀՀ վարչական դատարանի 13.06.2026 թվականի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով արձանագրվել է, որ ԿԸՀ-ն պետք է ընտրությունների արդյունքների ամփոփման փուլում որոշում ընդունի առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու եւ անցկացնելու վերաբերյալ:

Հիշեցնենք, որ ԲՀԿ-ն 2 հայց էր ներկայացրել վարչական դատարան՝ վիճարկելով ԿԸՀ-ի այն որոշումները, որոնցով 2 ընտրատեղամասերում անվավեր էին ճանաչվել քվեարկության արդյունքները, որոնք մերժվել էին, սակայն դատարանը որոշել էր, որ ԿԸՀ-ն ԱԺ ընտրությունների արդյունքների ամփոփման փուլում ստիպված է լինելու ընդունել որոշում առանձին ընտրական տեղամասում «վերաքվեարկություն անցկացնելու մասին»: «Վարչական դատարանում մենք ունենք օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որն ասում է, թե ինչ պետք է անի ԿԸՀ-ն՝ ամփոփելով արդյունքները, որը ԿԸՀ-ն չի կատարել: ԿԸՀ-ն եղել է պատասխանող, սա վերացական դատական ակտ չէ, դա իր գործողությունների ու անգործության վերաբերյալ դատական ակտ է, եւ իրեն վերապահված գործառույթ կար այդտեղ, որը չի արել եւ պատասխանատվության պետք է ենթարկվի դրա համար»,- ասում է Զարուհի Փոստանջյանը:

- Ինչո՞ւ է ԿԸՀ-ն այսպիսի որոշում ընդունել:

- Իրենք կորցրել են իշխանության նկատմամբ մենաշնորհը եւ հիմա այդ հարցն էին լուծում: Բայց դատական ակտի առկայության պայմաններում պետք է լիներ նորից քվեարկություն, որը չի եղել, եւ այս պառլամենտը լեգիտիմ չէ:

- Ընդդիմության անելիքը ո՞րը պետք է լինի:

- Առաջնահերթն ընտրողների կոնսոլիդացիան է եւ ցանցային բողոքի կազմակերպումը: ՍԴ դիմելն ինքնին պետք է արվի, բայց դա չի կարող արդյունավետ լինել՝ առանց հավաքներով բողոք իրականացնելու, որը քաղաքացու ամենակարեւոր սահմանադրական գործիքակազմն է՝ փողոցային բողոքը:

- Կարո՞ղ է այսօրվա ընդդիմությունն այդ բողոքը կազմակերպել, ոնց որ թե այնքան էլ հակված չեն դրան:

- Ընդդիմությունն այդ քվեն ստացել է, դա իրական է, ընդդիմությունը դա վաստակել է, ստացել է իր քրտինքով: Մեկը ես՝ տվել եմ ընդդիմությանը: Այդ 3 ուժերի ընդհանուր քվեն ծանրակշիռ քվե է, խաղուպար չէ, եթե անգամ դրա որոշ մասը փողոցային պայքարի դուրս գա, դա շատ մեծ ուժ է, եւ ոչ մի այլ բողոք այդ բողոքին չի կարող փոխարինել: Ամբողջ հանրապետությունով են եղել ընտրատեղամասերը, եւ պետք է բոլորը ոտքի կանգնեն: Մենք ունենք հազարավոր քաղաքացիներ, որոնք գնացել են ընտրատեղամասեր, քվեարկել են, ու նրանց քվեն զրոյացրել են, իսկ մնացածինը հաշվել են: Ինչո՞վ են նրանք մեղավոր:

- Իսկ եթե մարդիկ դուրս չգան պայքարի...

- Եթե դուրս չգան, մեզ հայաթափում է սպասվում:

ՊԵՏՔ Է ՀԵՐՔՎԻ ԱԱԾ-Ի ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՏԵՍԱՆՅՈՒԹԸ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՎԱՐԿԱԾԸ

Հայկա ԱԼՈՅԱՆ

Մեր զրուցակիցն ԱԱԾ նախկին ղեկավար **Միքայել Համբարձումյանն** է:

- «Զվարթնոց» օդանավակայանում ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի աշխատակիցների կողմից արգելվեց Գագիկ Ծառուկյանի եւ Ռոբերտ Քոչարյանի կարճատեւ մեկնումը Հայաստանից: Նարեկ Կարապետյանին էլ հայ-վրացական սահմանը թույլ չտվեցին հատել: Խնդրում եմ մեկնաբանել՝ իրավական ի՞նչ հիմքով կարող է անձին արգելվել սահմանահատումը:

- Անձի սահմանահատումը կարող է արգելվել միայն այն դեպքում, եթե նրա նկատմամբ կիրառված է բացակայելու արգելք խափանման միջոց: Հակառակ պարագայում՝ սահմանապահը չի կարող տեղում կամայական որոշում կայացնել. նրան իրավական հիմք է անհրաժեշտ: Կարող են լինել նաեւ պետական կամ ազգային անվտանգության շահերից բխող սահմանափակումներ, մասնավորապես երկրից դուրս գալու իրավունքը կարող է արգելվել, եթե, օրինակ, պետական գաղտնիքի հետ առնչություն ունեցած անձի նկատմամբ սահմանված է նման հատուկ սահմանափակում, ինչը, սակայն, իմ կարծիքով, կիրառելի չէ նշված 3 դեպքում, քանի որ մինչ այդ նրանք բազմիցս հնարավորություն են ունեցել մեկնել ՀՀ-ից ու վերադառնալ: Այսինքն՝ առանց դատաքննչական մարմինների որոշման սահմանապահների կողմից սահմանահատման արգելքն ապօրինի է եւ կամայական:

- Ինչպե՞ս է հատուկ վերահսկվող տարածքից՝ օդանավակայանում գտնվող ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հսկիչ-անցագրային կետի տեսախցիկի տեսագրությունը՝ երկրորդ նախագահի մասնակցությամբ, հայտնվում Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթի տելեգրամյան էջում: ԱԱԾ-ից բացի որեւէ մեկը կարո՞ղ էր տեսանյութը փոխանցել:

- Ես չեմ կարող մեկնաբանել, թե ինչպես է տեղի ունեցել տեսագրությունների արտահոսքը եւ տարածումը մամուլով. այդ հարցը գտնվում է ԱԱԾ տիրույթում: Իմ կարծիքով՝ տեսագրությունները պարունակում են ծառայողական գաղտնիք, հետեւաբար՝ ԱԱԾ-ի կողմից չէին կարող պաշտոնապես փոխանցվել լրատվամիջոցներին: Բացի այդ, նման տեղեկատվության տարածումը սահմանափակված է նաեւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, քանի որ խախտվում է մարդու անձնական կյանքի գաղտնիությունը: Իմ կարծիքով, տեսագրությունը տարածվել է ապօրինի եւ հնարավոր է քաղաքական ենթատեքստով՝ նախագահ Քոչարյանի կողմից երկրից փախչելու վերաբերյալ թյուր կարծիք կամ տպավորություն ձեւավորելու նպատակով:

- Ընդունելի՞ եք համարում ԱԱԾ-ի կողմից ներքաղաքական գործընթացներում այս ձեւով ներգրավումը:

- Ներքաղաքական գործընթացներում ԱԱԾ-ի ներգրավումը պետք է բացառել: Նախկինում ձեւավորված այս արատավոր պրակտիկան անհրաժեշտ է վերացնել, շտկել եւ հետեւություններ անել: Ընդհանրապես, եթե տվյալներ են հրապարակվում կոնկրետ անձանց վերաբերյալ, պետք է խիստ զգուշավորություն դրսեւորել, որպեսզի չխախտվեն մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, բարի համբավն ու արժանապատվությունը: Նման սխալներ եւ բացթողումներ եղել են բազմիցս, այդ թվում՝ իմ պաշտոնավարման ընթացքում:

- Ի՞նչ գործընթաց կամ ներքին հետաքննություն պետք է սկսվի ԱԱԾ-ում՝ այս միջադեպից հետո:

- Եթե տեղի է ունեցել ծառայողական գաղտնիքի չսանկցավորված արտահոսք, ուրեմն պետք է անցկացնել ծառայողական քննություն, պարզել մեղավորներին եւ պատասխանատվության ենթարկել, ընդ որում՝ այդ մասին որոշակիորեն իրազեկել նաեւ հանրությանը, որպեսզի հերքվի ԱԱԾ-ի կողմից դիտավորությամբ տեսանյութը տարածելու վարկածը: Ամեն դեպքում, նման փաստերը վաղ թե ուշ դառնալու են քննության առարկա:

ՅԱՅԵՑՔ

ԲԱ Ո՞ՒՐ Է ՔՈՉԱՐՅԱՆԻ ԽՈՍՏԱՑԱԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 14-ին ԿԸՀ-ն հրապարակեց ընտրությունների վերջնական արդյունքները, համաձայն որոնց՝ ԲՀԿ-ն չի անցնում խորհրդարան: 6 ընդդիմադիր ուժ՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը, «Հայաստան» կուսակցությունների դաշինքը, «Բարգավաճ Հայաստանը», «Լուսավոր Հայաստանը», Հայ ազգային կոնգրեսը, Ազգային ժողովրդավարական բեւեռը, հայտարարություն տարածեցին՝ նշելով, որ չեն ճանաչում ընտրությունների արդյունքները: Հայտարարությանը, զարմանալիորեն, չմիացավ Արման Թաթոյանի գլխավորած «Միասնության թեւերը»: Զրուցել ենք Թաթոյանի գործընկեր, նույն ցուցակով ընտրություններին մասնակցած «Շանթ դաշինք» կուսակցության ղեկավար **Շահեն Հարությունյանի** հետ:

- Ճիշտ են լուրերը, որ Ձեր եւ Թաթոյանի համագործակցությունը դադարել է, ինչ-ինչ տարաձայնություններ ունեք:

- Ոչ, ճիշտ չեն: «Շանթ դաշինքն» ու «Միասնությունը» միասին գնացել են ընտրությունների, հիմա չկա ընտրական համագործակցություն, բայց քաղաքական դաշտում շատ լավ ու ջերմ հարաբերություններ ունենք: Հետընտրական գործողություններում էլ ենք միասնական: Ես հույս ունեմ, որ հետագայում էլ մեր համագործակցությունը կշարունակվի, որովհետեւ երկու թիմում էլ շատ լավ մարդիկ են հավաքված, գաղափարական ընդհանրություններ ունենք:

- Իսկ ինչպես եք վերաբերվում, որ դաշինքը չմիացավ 6 ուժերի հայտարարությանը:

- Շատ նորմալ, ինքս էլ մասնակցել եմ որոշ քննարկումների, եւ անպայման չէ բոլոր հայտարարություններին միանալ: Մենք այն եզակի ուժերից մեկն ենք եղել, 3 ուժերից մեկը, որ ոչ միայն խոսքով, այլեւ գործով ենք դեմ գնացել այս ընտրական արդյունքներին՝ բողոքարկումներ ենք իրականացրել, վերահաշվարկներ պահանջել, մեր թիմակիցներն օրեր շարունակ ընտրատեղամասերում աշխատել են, վերահաշվարկ արել, փորձել վերադարձնել թեկուզ մեկ քվե, որը կարող էր գողացված լինել: Մինչդեռ այլ ուժեր ուղղակի հարցազրույցներ էին տալիս, ստատուսներ գրում, չէին ճանաչում ընտրությունների արդյունքները, բայց ոչ մի քայլ չէին անում:

- Եկեք ձեր մասին խոսենք՝ եթե այդքան բան արել եք, ինչն էր խանգարում ընդդիմադիր ուժերին միանալուն, կոմպլեքս ունեք այդ ուժերի հետ նույն հարթակում գտնվելու, թե՞ այլ պատճառներ կան:

- Կոմպլեքսի խնդիր չէ, տարբեր մարտավարական ուղղություններ կան, մի հայտարարությամբ է որոշվում:

- Ուղղակի հավաքական ընդդիմության դիրքորոշումն է, որտեղ դուք չկաք:

- Դե, ուրեմն էդ հավաքական ընդդիմությունն էլ մեզ հետ գնար վերահաշվարկների:

- Ասել եք, չե՞ն եկել, իրենք էլ իրենց տեղում են քայլեր արել:

- Իրենք՝ ովքե՞ր, միայն ԲՀԿ-ն, «Հայաստան» դաշինքն են արել:

- «Ուժեղ Հայաստանն» էլ արդյունքները ճանաչելու դիմումներ է ներկայացրել, պարտադիր բոլորը նույնը պետք է անեին, ի՞նչ կապ ունեն ձեր գործողությունները հայտարարությանը չմիանալու հետ:

- Ես էլ եմ դա ասում, որ ամեն մեկս մի գործողություն արել ենք:

- Խոսքն ընդդիմադիր համատեղ հարթակի մասին է, որում ձեզ, փաստորեն, չեք տեսնում:

- Նույն ԱԺԲ-ն ասել է՝ չեմ հավատում բողոքարկումներին, բայց միացել է հայտարարությանը, օրինակ, ինչո՞ւ իրենցից չեք հարցնում՝ եթե ընտրությունների արդյունքները չեք ճանաչում, ինչո՞ւ չեք բողոքարկում: Եվ հետո՝ հավաքական ընդդիմություն ասվածը շատ մեծ է, մենք մեր ուրույն ճանապարհն ենք տանում, ի՞նչ խնդիր կա:

- Գո՞հ եք ձեր ստացած ձայներից, կարծես ամենաշատ ռեսուրս օգտագործած ուժերից եք:

- Իհարկե, մեր ակնկալիքները չարդարացան. այն, ինչ վերջում կատարվեց մեր դեմ, այդպես էլ պետք է լիներ: Մի մոռացեք, որ մենք հինգերորդ տեղն ենք ընկել՝ զիջելով միայն Ծառուկյանին, Քոչարյանին, Կարապետյանին եւ իշխանություններին, որպես առաջին մասնակցություն՝ նորմալ եմ գնահատում: Բայց վերջին օրերին մեր դեմ սեւ քարոզչություն իրականացվեց, արհեստական բանականության միջոցով՝ ուղիղ, եւ սա, բնականաբար, չէր կարող չազդել մեզ վրա: Մի կողմից, իշխանության կողմից էր իրականացվում, մյուս կողմից՝ ընդդիմության, թե մենք կմիանանք ՔՊ-ին, իհարկե, որքան էլ փորձեցինք հերքել, բայց դա իր ազդեցությունն ունեցավ:

- Իսկ ո՞նց եք պատկերացնում ապագայում քաղաքական գործընթացները, մանդատները վերցնել-չվերցնելու հարցն է օրակարգային, ինչ լուծում եք տեսնում:

- Եթե մենք լինեինք իրենց պարագայում, մեր դիրքորոշումը կարտահայտեինք:

- Ձեր խորհրդով օգնեք գործընկերներին:

- Ի՞նչ օգնենք, էդ մարդիկ ասում էին՝ կրելու ենք, 2021-ին էլ էին ասում:

- Դուք էլ էիք շատ բան ասում:

- Ոչ մի տեղ չեք կարող տեսնել, որ մենք նման բան ենք ասել: Ասել ենք, որ կա հավանականություն, սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ մենք անցնելու ենք խորհրդարան: Իսկ մյուս ընդդիմադիր ուժերն իրենց գործընկեր ուժերին վարկաբեկում էին, ասում՝ 2 տոկոս ձայն են հավաքելու:

- Դուք էլ եք բազմիցս հարվածել ընդդիմադիրներին, հիմա հեգնում եք, թե ասել են՝ կրելու ենք, կարծում եք՝ արդար ընտրություններ են եղել, ու չե՞ն կրել:

– Չէ, ես համարում եմ, որ ընտրությունները խախտվել են, լեգիտիմ չեն եղել, վերջին 3 տեղամասերի արդյունքների չեղարկումը դրա ապացույցն է, բայց Դուք այլ հարց եք տալիս, ես այլ բանի եմ պատասխանում, վերջում այլ հետեւություն եք անում:

- Ուղղակի Ձեր հեգնանքը զգացվեց, ասել են՝ կրելու ենք, ես էլ հարցնում եմ՝ մաքուր ընտրություն է եղել, ու չե՞ն կրել, Դուք էլ ասում էիք՝ անցնելու ենք խորհրդարան, բա ինչի՞ չանցաք:

- Դուք երբեւէ չեք տեսնի, որ մենք ասել ենք՝ հաղթելու ենք:

- Լավ, հիմա, ըստ Ձեզ, ի՞նչ ճանապարհ ունի ընդդիմությունը:

- Այդ մարդիկ պետք է որոշեն, հիմա մի բան ասեմ, կասեն՝ մանդատ չունես, հանգիստ խոսում ես: Բայց եթե իրենք հայտարարել են, որ գնում են իշխանությունների տապալմանը, այլ ոչ թե մանդատներ վերցնելուն, հիմա թող մտածեն, չեն կարողացել իրենց խոստումը կատարել՝ տապալել իշխանություններին, ի՞նչ պիտի անեն: Իրենց համար իրենց խոստո՞ւմն է կարեւոր, խորհրդարանում լինելով կարողանալո՞ւ են իրենց խոստումն իրագործել, թե՞ ... եթե կարեւոր է խոստում պահելը, դա ուրիշ բան, եթե՝ ոչ, դա հարցի մյուս կողմն է: Արդեն վիդեոներ են պտտվում, որ այսօրվա մանդատակիր ինչ-որ մեկն ասում էր՝ 25 մանդատով մտնենք խորհրդարան, ի՞նչ անենք: Հիմա ասում է՝ գնանք վերցնենք մանդատները:

- Իսկ չվերցնելն ի՞նչ է տալու:

- Եթե չեն ճանաչում, ասում են՝ լեգիտիմ չի եղել, թող, ուրեմն, չվերցնեն, մյուս կողմից էլ՝ կարող են վերցնել ու շարունակել պայքարը, դուրս գալ փողոց կամ չվերցնել՝ նորից դուրս գալ փողոց:

- Համարում եք, որ փողոցո՞վ պետք է լուծեն իշխանության հարցերը:

- Համարել-չհամարելու խնդիր չկա, այդ մարդիկ խոստանում էին՝ եթե մեր քվեն գողանան մեզնից, հեղափոխություն ենք անելու, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը նման բան է ասել՝ բա ո՞ւր է խոստացած հեղափոխությունը, քանի՞ անգամ պիտի խաբի ժողովրդին: 2021-ին ասաց՝ պիտի կրենք, չկրեց, այս անգամ ասաց՝ հեղափոխություն ենք անելու: Դառնում են ընդդիմադիր լիդերներ... Հազար անգամ ասացինք՝ ձեր գոյությունը խանգարում է իշխանության դեմ պայքարում, շատ վատ 10 տարիներ ենք ունեցել, բայց գալիս ու խաբում են ընդդիմադիր հատվածին, էլի գնում են:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am



ԿԱԶԻՆՈՅՈՒՄ ՏԱՆՈՒԼ Է ՏՎԵԼ ՈՒ ՄԵՂԱՅԱԿԱՆՈՎ ԳՆԱՑԵԼ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ԴՈՒՐԸ

Վեդիի հիվանդանոցի ՔՊ-ական տնօրեն Արամայիս Գրիգորյանի գործը գնացել է դատարան, քննվելու է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Արամ Գրիգորյանի վարույթում: ԲԿ տնօրենը Վեդիի ավագանու անդամ էր եւ Վեդիի ՔՊ-ական ղեկավար Գարիկ Սարգսյանի մտերիմ ընկերը:

Արամայիս Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն եղած ժամանակ (2019-2026 թթ.) ծառայողական լիազորություններն օգտագործելով եւ գլխավոր հաշվապահ Արմինե Սիմոնյանի օժանդակությամբ 2023-2026 թվականներին կատարել է իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի՝ 185 մլն 971 հազար 917 դրամի գույքի հափշտակություն: Առանձնապես խոշոր չափերով վստահված գույքի հափշտակության հոդվածով քրեական գործ է հարուցվել դեռ փետրվարի 17-ին, սակայն մինչեւ հանրային աղմուկը, ՔՊ-ականը դատավարական կարգավիճակ չի ունեցել: Արամայիս Գրիգորյանը ԲԿ-ին պատկանող մոտ 186 միլիոն դրամը «կրվել է» օնլայն կազինոյում:

Գրիգորյանի պաշտպան **Ռոլանդ Ավոյանը** «Հրապարակ»-ին ասաց, որ իր պաշտպանյալն ընդունում է մեղադրանքը, վերջինս անձամբ դիմել է դատախազություն եւ պատմել, թե ինչ է արել. «Ոչ միայն մեղադրանքն ընդունում է, այլ նաեւ ինքը մեղայականով հայտնել է դեպքի մասին, քրեական վարույթը նախաձեռնվել է իր իսկ հաղորդման հիման վրա, այսինքն՝ իրավապահներին այդ տեղեկատվությունը հասու է դարձվել հենց իմ վստահորդի կողմից գլխավոր դատախազին ներկայացված մեղայական հաղորդման հիման վրա: Այս խնդրի մասին թե՛ իրավապահները, թե՛ լրագրողները իմացել են, երբ իմ վստահորդը գլխավոր դատախազին ներկայացրել է հաղորդում»: Այսինքն, պարտավորվե՞լ է գումարը վերադարձնել: Փաստաբանն ասաց՝ հարազատների աջակցությամբ 115 միլիոն դրամ արդեն վերադարձրել է. «Այդ գումարի մեծ մասը՝ 115-ն արդեն իսկ վերականգնված է: Մնացած մասով ակնկալվում է, որ ինքը պետք է աշխատի եւ պարբերաբար այդ գումարը վերականգնի, այսինքն՝ ավելին չունի: Այս պահին չի աշխատում, քանի որ խափանման միջոցը կալանքն էր ընտրված, հետո՝ տնային կալանքը, եւ ընդամենը վերջերս է, որ վարչական հսկողությամբ է փոխարինվել տնային կալանքը: Այսինքն՝ ինքը հնարավորություն չուներ էլ այդ խափանման միջոցների պայմաններում աշխատելու: Տեղյակ եմ, որ նպատակադրված է՝ աշխատելու իր մասնագիտությամբ, քանի որ բժիշկ է»: Իսկ ինչպե՞ս է ընթանալու դատավարությունը՝ արագացված նիստե՞ր են լինելու՝ հաշտության վարույթով: «Որեւէ նիստ տեղի չի ունեցել, առաջիկա նիստում բոլոր հարցերը կքննարկվեն թե՛ վստահորդի, թե՛ հանրային մեղադրողի հետ»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԳԱԼԻ ՄԱՍԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՉԻ ՀԱՄԱՐՈՒՄ ԼԵԳԻՏԻՄ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանն** է:*

- 2003 թվականին ՍԴ այն ժամանակվա նախագահ Գագիկ Հարությունյանը ձեւավորված հանրային պահանջի արդյունքում բավականին համարձակ որոշում կայացրեց՝ նախագահական ընտրությունների արդյունքները փաստացի կասկածի տակ դնելով, եւ հանձնարարեց 2004-ին՝ ընտրություններից 1 տարի անց անցկացնել վստահության հանրաքվե՝ Ռոբերտ Քոչարյանի հաղթանակի լեգիտիմացման համար, այն պարագայում, երբ Քոչարյանը նախագահ էր դարձել երկու փուլով ընթացած ընտրությունների արդյունքում: Ստացվում է, որ անգամ Ռ. Քոչարյանի իշխանավարման տարիներին Սահմանադրական դատարանը բավականին անկախ է եղել եւ կարողացել է հակառակ գնալ գործող իշխանություններին, ինչը չենք կարող ասել այսօրվա մասին: Եվ այդ պրոցեսները զուգորդվել են փողոցային պայքարի հետ, այդ ճնշումն է նաեւ մղել, որպեսզի ՍԴ-ն ինչ-որ առումով հաշվի նստի օրենքի հետ եւ կայացնի այնպիսի որոշում, որն առնվազն չի լինի իշխանության օգտին: Այժմ չկա փողոցային պայքար, չկա ճնշում, եւ ԿԸՀ-ն բացարձակ ապօրինի որոշում է կայացնում: Իսկ գուցե պատճառն այն է, որ մարդիկ չե՞ն ցանկանում դուրս գալ փողոց, թե՞, այնուամենայնիվ, ընդդիմությունը քայլեր պետք է ձեռնարկի: Փաստացի, ընդդիմադիր զանգվածը փոքրամասնություն չէ՝ կես միլիոնից ավելի մարդ իր քվեն տվել է ընդդիմադիր ուժերին:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

- Շատ լավ օրինակ էր 2003-ի օրինակը, ի հավելում այն քննարկումների, որ այդ տարիներին Հայաստանում գործում էր ավտորիտար ռեժիմ, որը նաեւ արյունարբու էր եւ այլն: Քաղաքական ենթատեքստի առումով գուցե քչերը հասկանան, սակայն Քոչարյանը ո՛չ 2003-ին, ո՛չ էլ 1998-ին առաջին փուլով չէ, որ ընտրվել է նախագահ: Սա շատ կարեւոր քաղաքական նրբերանգ է, եւ հենց այդ տարիներին է, որ մենք ունեցել ենք իրական կոալիցիա, այլ ոչ թե՝ ձեւական: Կոալիցիան ուներ նպատակ՝ ոլորտային առումով բաժանելու պատասխանատվությունը: Վերադառնալով ներկայիս անամոթ բարքերին, տրամաբանությունը հուշում է, որ առանց փողոցային պայքարի ու ճնշման, առանց հանրային պարսավանքի դժվար է պետական ապարատին ինչ-որ բան հասկացնելը, այն էլ՝ նման իշխանության պարագայում, որն ունի ձգտումներ՝ տոտալիտար համակարգ ձեւավորելու: Թե ինչու ընդդիմադիրները չեն սկսում փողոցային պայքար, ես չեմ կարող այդ հարցին պատասխանել: Մենք ունենք խորհրդարան անցած խմբակցություններ, ունենք ուժ, որը գրեթե հաղթահարել էր խորհրդարան անցնելու շեմը: Հայտարարությունների առումով նրանք՝ բոլորն ասում են, որ քննարկումների փուլում են եւ այլն, սակայն նրանք չեն ասում, թե ինչու մինչ այս պահը չեն ձեռնարկել փողոցային պայքարը: Լիբերալ արժեքներով դաստիարակված հասարակությունները չեն սիրում նման ձեւակերպումներ, սակայն Լենինը մի խոսք ուներ՝ «հեղափոխական պահ»: Ես կարծում եմ, որ մեր ընդդիմությունը հեղափոխական պահը կորցրեց, կորցրեց հունիսի 8-ի գիշերը՝ ժամը 01-04-ը: Եթե կարողանան այդ պահը վերակենդանացնել, գուցե այլ լինի, չգիտեմ:

- Բայց, օրինակ, Սամվել Կարապետյանի թիմից հայտարարեցին, որ եթե փողոցային պայքար սկսեն, իշխանությունը սադրանքների կդիմի, զոհեր կարող են լինել, արդյունքում լավ վերջաբան չի ունենա այդ ամենը, եւ հենց այդ պատճառով չեն սկսում փողոցային պայքար: Ճիշտ է՝ թիմի մեկ ներկայացուցիչ է դա ասել:

- Սամվել Կարապետյանն էլ դրանից օրեր առաջ այլ բան էր ասում, ասում էր, որ կգնան այն ճանապարհով, որով հնարավոր է արագ ազատվել Նիկոլ Փաշինյանից: Ասում էր, որ եթե ճիշտ այդ պահին լինի խորհրդարան գնալը, ապա կգնանք, եթե ճիշտն այլ բան է, կանենք այլ բան: Իրականում խնդիրը հետեւյալն է՝ քաղաքականությունը, անկախ այն բանից, թե խոսքը հետամնաց կամ զարգացած երկրի մասին է, քաղաքական պրոյեկտների պայքար է: Եթե ընդդիմությունն ունի քաղաքական պրոյեկտ, որը երկարաժամկետ է կամ միջնաժամկետ, ապա իրենք պետք է պլանավորեն, թե ինչ պետք է անեն մանդատների հետ, կամ երբ սկսել փողոցային պայքարը: Ցանկացած պարագայում ժողովրդի հետ պետք է անկեղծ լինեն: Եթե առանց պլանների ուզում ես ուղղակի վերցնել մանդատները, կամ շոգ է՝ հավես չունես փողոց դուրս գալու, ստացվում է, որ այս ամենը դառնում է անլուրջ: Խնդիրը քաղաքական պրոյեկտի լինել-չլինելու մեջ է:

- Այս ամենի ֆոնին Փաշինյանը հերթական անգամ սպառնում է, որ թավիշն ավարտվում է, եւ երեք ընդդիմադիր առաջնորդներին բանտարկելու է: Ստացվում է, որ ինչքան պայքարի ալիքը նվազում է, այդքան ավելի շատ է իշխանությունը լկտիանում:

- Այս ընտրությունները ցույց տվեցին, որ հասարակության զգալի մասը Նիկոլ Փաշինյանին չի համարում լեգիտիմ: Ալեն Սիմոնյանը մի գրառում էր արել այն մասին, որ այժմ 2021-ի համեմատ ավելի շատ քվեներ են ստացել, բայց այս տրամաբանությամբ ընդդիմությունն էլ է ավելի շատ ձայներ ստացել, քան 2021-ին: Մոտ հինգ անգամ ավելի շատ քվե են ստացել ընդդիմադիրները: Այս ընտրությունների ամենաառանցքային կողմն այն է, որ Փաշինյանն իր ծրագրերով ոչ լեգիտիմ է: Նրան հասարակության մեծ մասը չի աջակցում:

Ո՞Ր ԽԵԼԱՑԻ ՄԱՐԴԸ ԿԳԱ՝ ԷԴՊԻՍԻ ՄԱՐԴՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Նիկոլ Փաշինյանն օրերս հայտարարություն էր տարածել, որով աշխարհի առաջատար 200 համալսարանների շրջանավարտներին հրավիրում էր ընդգրկվել ՀՀ կառավարության կադրային բանկում եւ խոստանում էր, որ այդ կադրային բանկում ընդգրկվածներին առաջիկա մեկ տարվա ընթացքում կառաջարկվի կոնկրետ աշխատանք: Մենք հիշեցինք, որ 2018-ին եւս, իշխանության գալով, Փաշինյանը նման նախաձեռնությամբ էր հանդես եկել. աշխարհի ամեն ծայրից հրավիրում էին հայազգի մասնագետներին՝ գալ եւ աշխատել Հայաստանում: Նաեւ տեղում էին փորձում նոր կադրեր գտնել ու աշխատանք առաջարկել, եւ, իսկապես՝ 18-ին նոր մարդիկ հայտնվեցին պետական ապարատում, սակայն կարճ ժամանակ անց նրանք հիասթափված հեռացան, կամ նրանց հեռացրին, որովհետեւ լավ կրթություն ստացած մասնագետները նաեւ արժանապատվության զգացում են ունենում եւ սեփական կարծիք, իսկ նման մարդիկ չէին կարող երկար աշխատել Նիկոլ Փաշինյանի դիկտատի ներքո: Հիմա պատմությունը կրկնվում է, սակայն արդյոք այս անգամ որեւէ մեկը կարձագանքի՞ այս կոչին: Մենք զրուցել ենք կրթության փորձագետ **Ատոմ Մխիթարյանի** հետ:

- Ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանը կրկին հիշել միջազգային բուհերի ուսանողներին:

- Երեւի ինչ-որ մեկին մտքում ունի, ում բերել, այստեղ պաշտոն տալ, մտածում է, որ այդ հայտարարությունով ինչ-որ մարդկանց բերելն արդարացված կլինի, քանի որ այնպես չէ, որ լավագույն բուհերի սովորողները կարող են Հայաստանի պետական համակարգում աշխատել, այն էլ՝ Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ: Ես գիտեմ շատ-շատերին, որոնք նույնիսկ ոչ թե շրջանավարտներ են, այլ այդ բուհերի աշխատակիցներ են, նրանք հրաժարվել են գալ Հայաստան, քանի որ այն սահմանափակումները, որոնք դնում է ներկա կառավարությունը, նրանք պատրաստ չեն դրանց շրջանակներում աշխատել: Քանի որ այդ մարդիկ ազատություն են սիրում, նրանք ինքնադրսեւորման հնարավորություն պետք է ունենան: Այնպես չէ, որ լավագույն մասնագետին բերես նստացնես քանդված պետական համակարգի մեջ, դա կարող է արդյունավետ լինել, ընդհակառակը կլինի: Բացի դա, աշխատավարձն է էականորեն տարբերվում՝ մեկ զրոյի տարբերություն է, այսինքն, 10 անգամ ավելի բարձր է դրսում աշխատավարձը, եւ այնպես չէ, որ մարդիկ խանդավառված կգան, որ էստեղ իր ձեռքի տակ աշխատեն: Պետք է կառավարության ղեկավարին փոխել եւ էնպիսի մարդ դնել, որը գնահատում է գիտելիքով մարդուն եւ կարիքը զգում է, այդ ժամանակ նոր այս մարդիկ կգան Հայաստանում աշխատելու:

- Նիկոլ Փաշինյանն իր վարչապետության առաջին տարիներին էլ կադրերի բանկ հավաքելու փորձ էր արել: Հիշո՞ւմ եք նախորդ փորձը, ինչ եղավ արդյունքում:

- Մարդիկ ամբողջ աշխարհից իրենց ինքնակենսագրականներն ուղարկում էին, որպեսզի այստեղ պաշտոնների նշանակվեն, բայց դրանց մեջ 1-2-ը պաշտոն ստացավ, այն էլ՝ երեւի մտան ՔՊ կուսակցություն, նոր կարողացան պաշտոններ զբաղեցնել: Սա նույն ձեռագիրն է՝ ուղղակի 7-8 տարի հետո:

- Զարեհ Սինանյանի «ՆերՈւժ» սփյուռքի սթարթափ ծրագիրն ինչ տվեց:

- Ծրագրով միջազգային բուհեր ավարտածները վերադառնում են հայրենիք եւ պետական պաշտոններ են զբաղեցնում, հետո որոշում են՝ մնա՞լ Հայաստանում եւ որոշակի պաշտոն զբաղեցնել, թե՞ գնալ: Բայց իմ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում Հայաստանից գնացած ուսանողներն են, որոնք դրսում սովորել են, կա՛մ այստեղից իրենք են գնացել, կա՛մ իրենց ծնողները, եւ նրանք հեշտ կարող են ինտեգրվել Հայաստանի պայմաններին: Բայց, օրինակ, այնպիսի երկրներ, ինչպիսիք են Լատինական Ամերիկայի երկրները, նույն Ամերիկան կամ եվրոպական երկրների ուսանողներին դժվար կլինի հայկական պետական համակարգում ինտեգրվելն ու արդյունք ցույց տալը: Կարելի է ասել՝ սա եւս բյուջեի փողերի մսխում է, որովհետեւ չես կարող էդպես բերել ու ինտեգրել, համակարգը պետք է փոխվի, նոր կարողանա իրենց ներքաշել իր մեջ:

- Ինչո՞ւ չեն կարող ներգրավվել ՀՀ պետական կառավարման համակարգում: Արդյոք խնդիրը կառավարման վերաբերյալ ունեցած գիտելիքի եւ ՀՀ-ում պահանջվող հմտությունների տարբերությո՞ւնն է:

- Նրանք անհատներ են, որոնք ունեն լրիվ այլ մտածողություն: Մեկը, որ այլ մտածողությամբ գա Հայաստան, եւ իրեն ներդնեն Հայաստանի պետական համակարգում, Հայաստանի պետական համակարգի ճահիճը նրան ուղղակի կուլ կտա: Նա միայնակ ոչինչ չի կարող ինքնուրույն փոխել, դրա համար համակարգը նախ պետք է բարեփոխվի, նոր կլանի լավ մասնագետներին: Մենք այս պահին ունենք 5 հազարից ավելի ուսանողներ, որոնք աշխարհի առաջատար բուհերում են սովորում, բայց նրանց 10 տոկոսն անգամ չի վերադառնում: Սա խոսում է այն մասին, որ Հայաստանի պետական կառավարման համակարգը վատ աշխատող, արդյունք ցույց չտվող համակարգ է, որի գլխին էլ մարդ է, որը, իր բառերով, 7 տարի նույն դասարանում է մնացել, բարձրագույն կրթության դիպլոմ էլ չունի: Օրինակ, ո՞ր խելացի մարդը կգա, էդպիսի մարդու ղեկավարության ներքո կփորձի ինչ-որ գործ անել: Սա ուղղակի աբսուրդ է:

ԿԸՀ

ՍԿՍՎԱԾ, ԲԱՅՑ ՉԱՎԱՐՏՎՈՂ ԷՇԻ ՀԱՐՍԱՆԻՔ

Դենց սկզբից ասեմ, որ մեր ընտրությունների վրա դրսի ազդեցության մասին ոչ մի խոսք այս հոդվածում չկա: Կարճ ասած՝ մենք մերոնցով ենք: Եվ ուրեմն...

Վահագն Հովակիմյան, դու պետք է շատ արագ կողմնորոշվես՝ կամ դու ես հիմար, կամ՝ շեֆդ: Ես ամենայն լրջությամբ եմ ասում: Մինչեւ ՍԴ-ն վճռի, թե ինչ է անում այս խայտառակ ընտրությունների հետ, որոնք դու եւ շեֆդ կայացած եք համարում, պետք է կողմնորոշվեք՝ իրավունք ունեի՞ք, արդյոք, կայացած հայտարարել համատարած ընտրակաշառքներով ուղեկցված ընտրություններն ու մի բան էլ վերջնական արդյունքներ հրապարակել: Եթե ունեք այդ իրավունքը, ցույց տվեք, խնդրեմ, իսկ եթե ոչ, ապա երկուսդ էլ ռադներդ քաշեք եւ թույլ տվեք ժողովրդին՝ իրական ընտրություն կատարել: Ասողն էլ ես չեմ, Վահագն Հովակիմյան, շեֆդ է ասել, որ 500 հազարից ավելի մարդ 100 տոկոսով ընտրակաշառք է ստացել: Եվ դու, ո՞վ կոլոտ կամանդիր, անտեսելով այդ «փաստն» ու առանց մի գրամ ամաչելու, արդյունքնե՞ր ես հրապարակում:

Ի դեպ, ԿԸՀ պատմության մեջ Վահագն Հովակիմյանի անունը գրվեց որպես այդ կառույցի առաջին նախագահ, ով չի կատարել, իսկ ավելի ճիշտ, քամահրել է ՀՀ դատարանի որոշումը՝ վիճելի ընտրատեղամասերում վերաքվեարկություն իրականացնելու մասին: Դու քանի՞ գլուխ ունես, Վահագն Հովակիմյան, որ քեզ վեր դասես ու դատարանի վճռից հետո դիմես մանիպուլյացիաների, թե բա՝ դատարանը սխալ որոշում է կայացրել, եւ հնարավոր չէ վերաքվեարկություն կազմակերպել, քանի որ այդ տեղամասերում փոխվում են ընտրությունների տրամաբանությունն ու ընտրողների հավասարությունը: Բայց մի հատ քո այդ հանճարեղ ուղեղով փորձիր հասկանալ՝ «հավասա՞ր» են արդյոք բոլոր ընտրողները, երբ դու քամահրում ես դատարանի վճիռն ու 3 տեղամասի քվեարկություն լցնում աղբարկղ: Քեզ է պետք նետել պատմության աղբարկղը եւ ոչ թե մեր հազարավոր ընտրողների քվեն:

Բայց նույնիսկ ձեր (քո եւ Նիկոլի) այս հանցագործությունը չի թեթեւացնում պատասխանատվությունն այն զրպարտության համար, որ Նիկոլ Փաշինյանը թույլ տվեց իրեն, իսկ դու պարտակեցիր՝ հայտարարելով վերջնարդյունքները՝ իբր ոչինչ տեղի չի ունեցել: Դե հիմա մտածիր, թե ինչ եք անելու, ինչպես եք դուրս գալու այդ խայտառակ զրպարտության տակից: 500 հազարից ավելի մարդու, առանց դատուդատաստանի, անվանել եք կաշառակեր եւ կնիք դրել պետական ամենաբարձր փաստաթղթի, այն է՝ համապետական ընտրությունների ամփոփագրի տակ:

Հետեւելով ձեր (քո եւ Նիկոլի) այս վարքագծին՝ ես էլ, որպես ընտրակաշառք ստանալու մեջ հանիրավի մեղադրված ՀՀ քաղաքացի, հայտարարում եմ, որ համատարած ընտրակաշառք է բաժանվել հենց ՔՊ-ի կողմից, եւ այդ ուժին տրված 700 հազարից ավելի քվեները 100 տոկոսով ընտրակաշառքի արդյունք են, եւ դրանց մեջ չկա գոնե մեկ հատիկ օրգանիկ քվե: Այսու՝ մեր շատ սիրելի տիկին դատախազին առաջարկում եմ քրեական գործ հարուցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի եւ իմ դեմ՝ որպես զրպարտիչների: Այո, տիկին դատախազ, դատեք մեզ եւ, եթե կարելի է, նույն գործով եւ նույն դատավորով, որ հանկարծ ինձ ու Նիկոլ Փաշինյանին (Վահագնը նրա հետ է) տարբեր պատժաչափեր չտա: Պատրաստ եմ նաեւ նրանց հետ նստել նույն խցում եւ կյանքներն ուտել այնքան ժամանակ, մինչեւ ընդունեն, որ իրենք ընտրակեղծարար են:

Հարգելի Վահագն Հովակիմյան (սենց լմ՛վ ա)... դու այս ընտրություններից մի այնպիսի էշի հարսանիք ես սարքել, որ մարդիկ (նկատի ունեմ ընդդիմությանը) չեն կարողանում հասկանալ՝ ճիշտը մանդատները վերցնե՞լն է, թե՞ չվերցնելը: Վերցնում են՝ դառնում են քո եւ Նիկոլի հանցակիցը, չեն վերցնում՝ չեն կարողանում իրենց ընտրողին պատասխան տալ կորած քվեների համար: Ես հասկանում եմ, որ «դափոնով» ԱԺ անցած ՔՊ-շնիկների համար սա խնդիր չէ, նրանց ձայները հիմնականում նկարված են, իսկ ստացած հատուկենտ քվեն՝ պատահականություն: Իսկ ի՞նչ անեն ընդդիմադիրները, որ մանդատներն ստանձնելով՝ ընկնում են քո եւ Նիկոլի քրեականացված ընտրությունների թակարդը, չստանձնելով՝ ամոթով մնում 500 հազար քաղաքացու առաջ:

Ձեր (քո եւ Նիկոլի) բուն մեղքը, պարոն Հովակիմյան, միայն ընտրակաշառք բաժանելը չէ: Դուք (դու եւ Նիկոլը) մի ամբողջ ընդդիմադիր քաղաքական ուժ եք կուլ տվել՝ իր ընտրազանգվածով հանդերձ: Այն էլ այնպիսի քաղաքական ուժ, որ թե՛ տարիքով է մեծ ՔՊ-ից, թե՛ իր կշռով (սա՝ անկասկած), թե՛ մեր երկրի համար իր արած-չարածով: Կարողանալո՞ւ եք մարսել, երբ ՍԴ-ում ձեզ հարցնեն՝ ԲՀԿ-ն ո՞ւր է, ինչո՞ւ չի անցել խորհրդարան: Պիտի ասեք՝ քվենե՞րը չեն բավարարել: ՍԴ ո՞ր դատավորը կհավատա ձեզ, երբ նրանց պարզաբանվեն այս ընտրությունների բոլոր հանգամանքներն ու հատկապես ամբողջական տեղամասերի արդյունքների չեղարկումը: ՍԴ-ն ձեզ (քեզ եւ Նիկոլին, պարոն Հովակիմյան) կհարցնի՝ ինչո՞ւ չեք կատարել վարչական դատարանի պահանջը՝ խնդրահարույց տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին: Եվ հանկարծ չփորձեք ՍԴ-ում դիմել մանիպուլյացիաների, ձեզ չեն հավատա, այլ սիրուն խոստովանեք, որ ԲՀԿ-ն այնքան ձայն ուներ այդ տեղամասերում, որ նրան լիուլի բավարար էր՝ ԱԺ շեմը հաղթահարելու համար:

Կարծում եմ՝ դրանից հետո ՍԴ-ն կխղճա ձեզ (քեզ ու Նիկոլին, պարոն Հովակիմյան) եւ կուղարկի նոր ընտրություններ անցկացնելու, բայց այս անգամ առանց ընտրակաշառքների եւ հետին մտքերի, որպեսզի 1,5 միլիոն մարդ, ի վերջո, կարողանա սեփական երկրում օրինավոր իշխանություն ձեւավորել: Եվ ոչ մի դեպքում չփորձեք ՍԴ-ի վճիռը չկատարել: Այդ 1,5 միլիոն մարդը փուլ կգա ձեր գլխին եւ այս անգամ արդեն կպահանջի նոր ընտրություններ՝ առանց Նիկոլի եւ Վահագն Հովակիմյանի:

ՀԳ. *44-օրյա պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանը համապետական երկու ընտրություն է կազմակերպել, երկուսն էլ՝ խայտառակ: Այդ ընտրությունների ժամանակ նա վարչապետի աթոռից գոնե մեկ ժամով չի իջել: Այս հիմքով՝ ՍԴ-ին առաջարկում եմ՝ Փաշինյանից հետաքրքրվել՝ պարոն վարչապետ, այսքանից հետո, արդյոք, ձեր բոլո՞ր վերջույթներն են տեղում, թույլ չե՞ք տվել, արդյոք, այնպիսի կեղծարարություն, որի համար ստիպված լինեք կտրել դրանք:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ո՞ՒՄ ԿՐՈՔՈՒՄ Է ԲԱԲԱԽՈՒՄ «ԴԱՆԿՈՅԻ ՍԻՐՏԸ»

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Գոհար Մելոյանի ասելով, «մոտ 30 ձայնի բացակայության եւ իրավասու մարմինների թերացումների պատճառով արհամարհել ու առոչինչ դարձնել 60 հազար ձայնը՝ դեմ է իրավական ու ժողովրդավար պետության առանցքային սկզբունքներին եւ ընտրական գործընթացի ողջ էությանը»: Հարգելով հանդերձ տիկին Մելոյանին՝ չպետք է համաձայնեմ նրա հետ: Նախ՝ այն հարցով, թե տեղի են ունեցել «իրավասու մարմինների թերացումներ»: Իրականում, դրանք ոչ թե թերացումներ էին, այլ նպատակամղված ջանքեր: Իսկ նպատակն էլ Գագիկ Ծառուկյանին ու նրա ԲՀԿ-ն ԱԺ-ից ներս չթողնելն էր, ինչն արդեն հստակ էր այն պահից, երբ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձն իր պաշտոնին բացարձակ անհարիր բառապաշարով սպառնում էր պատժել Ծառուկյանի որդուն: Ու ինքն ամեն ինչ անելու էր, որպեսզի հասներ իր նպատակին: Իսկ Ազգային ժողով ԲՀԿ-ի մուտքն արգելելը դրա մի մասն էր՝ կարեւոր մասը:

Ինչ վերաբերում է «մոտ 30 ձայնի բացակայության ... պատճառով 60 հազար ձայնն արհամարհելուն ու առոչինչ դարձնելուն», ապա դա բռնապետական կառավարման համակարգին բնորոշ երեւույթ է: Նախ՝ այն առումով, որ մեր այս դարում բռնապետը թքած ունի թե՛ 60 եւ թե՛ 160 հազար ձայնի վրա, եթե դա իրենը չէ: Երկրորդ. 30 ձայնի պատճառով 60 հազարը վարի տալը, հատկապես որ այդ ձայներն էլ, վստահաբար, չեղարկվել են ոչ օրինական հիմունքներով, իսկապես վկայում է արհամարհանքի մասին: Սակայն ոչ թե 60 հազարի «տերերի», այլ այն անձի նկատմամբ, որին հատկացվել էին դրանք: Այդ արհամարհանքը վկայում է, որ մենք գործ ունենք պետական մտածողության իսպառ բացակայության երեւույթի հետ: Այն անձի առումով, որը, որպես երկրի ղեկավար, պետք է հանդես բերեր նման մտածողություն: Իսկ դրա բացակայությունը վերջինիս «սիրելի» ժողովրդի խոսակցականում շատ ավելի բնորոշ ձեւակերպում ունի՝ «գեղցիական շուստրիություն»:

Եվ, վերջապես, տիկին Մելոյանի դատողության այն մասը, թե արվածը դեմ է «իրավական ու ժողովրդավար պետության առանցքային սկզբունքներին եւ ընտրական գործընթացի ողջ էությանը», ապա նման բան ասելիս ենթադրվում է, որ մինչ այդ գործ ենք ունեցել հենց իրավական ու ժողովրդավար պետության հետ: Այնինչ, քննչական ու ոստիկանական «բեսպրեդելի» առկայության պարագայում նման պետության մասին խոսելը մեծ շռայլություն կլինի: Կարծում եմ, որ մասնագիտությամբ իրավաբան տիկին Գոհարն ինձնից ավելի լավ է պատկերացնում իրավիճակը: Չնայած բոլորս էլ ուղեղի հեռավոր մի անկյունում հույս ունեինք, որ ընտրություններով հնարավոր է, այնուամենայնիվ, կատարել իշխանափոխություն: Այլապես իմաստ չէր ունենա եռամսյա այդ կրկեսին մասնակցելն ու մեկ դերասանով ներկայացմանը դիմագրավել փորձելը: Բայց կյանքը հերթական անգամ մեզ ցույց տվեց, որ հույս ունենալը վատ բան չէ, սակայն դրանով առաջնորդվելը՝ աններելի մանկամտություն, ինչը վերաբերում է մեզ՝ բոլորիս, շարքային քաղաքացուց մինչեւ առաջնային քաղաքական գործիչներին:

Ինչեւէ, ՀՀ վարչապետի պաշտոնին ինքնասոսնձված անձը հերթական դասը տվեց մեզ՝ բոլորիս: Ասել, թե նա ավելի խելացի է, քան իր ընդդիմադիրները, ճիշտ չի լինի: Բայց վերջիններս միշտ ինչոր կարմիր գիծ էին տեսնում կամ պատկերացնում առջեւում՝ մտածելով, որ այդ անձը չի համարձակվի հատել այն: Այնինչ վերջինս՝ առանց իրեն նեղություն տալու, անում էր դա եւ անում էր հաճույքով՝ դրանով մեզ ցույց տալով, որ ոչ մի կարմիր գիծ էլ չկա իրականում: Եվ ինքը միշտ կվարվի այնպես, ինչպես ցանկանում է, որպեսզի պահպանի պաշտոնը՝ թքած ունենալով մնացած ամեն ինչի վրա: Իզուր չէր, որ ժամանակին հիացած էր ամերիկյան բլոգեր ու գրող Մարկ Մենսոնի «Թքած ունենալու նուրբ արվեստը» գրքի վերնագրով: Չնայած կարդալով գիրքը՝ հասկացել էր, որ դա այն չէ, ինչն ինքը պատկերացրել էր նախապես:

Ես չգիտեմ, թե ինչպես կարձագանքի հավաքական ընդդիմությունը վերը նշված անձի՝ թքած ունենալու վարքագծին, բայց մի բան հստակ է՝ եթե դա ունենալու է խորհրդարանական պայքարի տեսք, ապա այն լինելու է երկարատեւ, ինչպես նաեւ՝ ընդդիմության համար տհաճ երեւույթներով հագեցած: Եթե ընտրվեց փողոցի ուղին, ապա այն հաջողության հասնելու համար չպետք է կրկնի այն, ինչը տեղի է ունեցել 2021-2024 թվականներին: Իսկ հաջողության հասնելու փոքրաթիվ ուղիներից մեկը, իմ համեստ կարծիքով, փոխաբերաբար ներկայացված է Մաքսիմ Գորկու «Դանկոյի սրտի» հերոսի տեսքով: Մնում է, որ հանդես գա այնպիսի մի երիտասարդ, որի կրծքում կբաբախի «Դանկոյի սիրտը»:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԻՐԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ՝ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ պատմական փաստաթղթի ձեռքբերման եւ ռազմական գործողությունների դադարեցման մասին ցանկալի լուրը կայծակի արագությամբ տարածվում է բազմաչարչար մեր մոլորակում: Երբ աշխարհը երկար ժամանակ ապրում է պատերազմի ռեժիմում, նույնիսկ մեկ հրադադարի լուրը կարող է հնչել որպես հույսի զանգ: Իսկ եթե իսկապես իրականություն է դառնում Իրանի եւ Միացյալ Նահանգների միջեւ համապարփակ համաձայնության ձեռքբերումը, ապա դա պարզապես հերթական դիվանագիտական փաստաթուղթը չէ: Դա կարող է դառնալ պատմական շրջադարձ ոչ միայն Մերձավոր Արեւելքի, այլեւ ամբողջ աշխարհի համար:

Մարդկությունը չափազանց մեծ գին է վճարել պատերազմների համար: Դարեր շարունակ ժողովուրդները կորցրել են իրենց լավագույն զավակներին, ավերվել են քաղաքներ, ոչնչացվել են մշակութային արժեքներ, խեղվել են միլիոնավոր մարդկային ճակատագրեր: Այդ պատճառով էլ ցանկացած համաձայնություն, որը կանգնեցնում է կրակը եւ հնարավորություն է տալիս խոսել ոչ թե հրթիռների, այլ բանակցությունների լեզվով, արժանի է ողջունման:

Համաձայն տեղեկությունների՝ ձեռք բերված հուշագրի առանցքային կետերը վերաբերում են ռազմական գործողությունների դադարեցմանը, անվտանգության երաշխիքներին, ծովային շրջափակման վերացմանը, Հորմուզի նեղուցի բնականոն գործունեության վերականգնմանը, Իրանի սառեցված ակտիվների հասանելիությանը եւ միջուկային հարցի բանակցային կարգավորմանը: Եթե այս դրույթները լիարժեք կյանքի կոչվեն, ապա դրանց նշանակությունը դժվար է գերագնահատել:

Առաջինը՝ ռազմական գործողությունների դադարեցումը, ամենակարեւորն է: Ոչ մի քաղաքական կամ աշխարհաքաղաքական նպատակ չի կարող հավասարվել մարդկային կյանքի արժեքին: Ամեն փրկված երեխա, ամեն չավերված տուն, չընդհատված մարդկային ճակատագիր արդեն իսկ հաղթանակ է:

Երկրորդ եւ երրորդ կետերը՝ առեւտրային սահմանափակումների թուլացումն ու Հորմուզի նեղուցի բնականոն աշխատանքի վերականգնումը, կարեւոր են ոչ միայն տարածաշրջանի, այլեւ ամբողջ աշխարհի տնտեսության համար: Ժամանակակից աշխարհում պատերազմը վաղուց դադարել է լինել միայն ռազմաճակատի, ռմբահարում-հրթիռակոծությունների ու սառնասիրտ ավերածությունների խնդիր: Այն հարվածում է հացի գնին, վառելիքի արժեքին, մարդկանց սոցիալական վիճակին նույնիսկ հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող երկրներում:

Չորրորդը՝ ֆինանսական ակտիվների ապասառեցումը, տնտեսական շնչառության հնարավորություն է տալիս ոչ միայն մեր հարեւան ու բարեկամ երկրին: Իսկ տնտեսական կայունությունը հաճախ խաղաղության կարեւորագույն երաշխիքներից է:

Հինգերորդ կետը՝ ամենաբարդ հարցերի տեղափոխումը բանակցային դաշտ, եւս մեկ անգամ ապացուցում է, որ նույնիսկ ամենասուր հակասությունները հնարավոր է քննարկել ոչ թե ռումբերով, այլ՝ խոսքի միջոցով:

ԱՄՆ-Իրան հակասությունների պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի իրանական ժողովուրդը: Անկախ քաղաքական գնահատականներից՝ դժվար է չնկատել այն տոկունությունը, որով իրանցիները դիմակայեցին ծանր փորձություններին: Պատերազմների իրական ծանրությունը միշտ կրում են հասարակ քաղաքացիները: Հենց նրանք են խաղաղության ամենամեծ շահառուները:

Մեզ՝ հայերիս համար, այս զարգացումներն ունեն նաեւ առանձնահատուկ նշանակություն: Հայաստանը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ ցանկացած մեծ ցնցում անմիջապես անդրադառնում է ազգային անվտանգության, տնտեսության եւ ապագայի վրա: Իրանը Հայաստանի կարեւոր հարեւանն է, եւ նրա շուրջ կայունության հաստատումը մեծացնում է նաեւ մեր տարածաշրջանի կանխատեսելիությունը, խաղաղության ապահովումը: Հատկանշական է, որ դեռ ամիսներ առաջ հրապարակված հոդվածներում հնչում էր այն միտքը, որ պատերազմի շարունակությունը կարող է աղետ դառնալ բոլոր կողմերի համար: Այդ գնահատականն այսօր առավել արդիական է: Իրոք, երբ պատերազմը ձգձգվում է, հաղթողներ չեն լինում: Կորցնում են բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր հայտարարում են հաղթանակի մասին: Հետեւաբար, այսօր թերեւս ամենաանիմաստ հարցը սա է՝ ով հաղթեց, ով պարտվեց: Եթե պատերազմը շարունակվեր, հնարավոր է՝ բոլորը պարտվեին: Եթե կողմերը կարողացել են վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ, ապա արդեն իսկ շահել են երկուսն էլ: Շահել են նաեւ աշխարհի ժողովուրդները:

Հինգ դար առաջ մեծ հումանիստ Էրազմ Ռոտերդամցին զգուշացնում էր. «Պատերազմը քաղցր է նրանց համար, ովքեր չեն տեսել այն»: Ժամանակը միայն հաստատել է այդ դառը ճշմարտությունը: Պատերազմը գրեթե միշտ ավելի շատ է խլում, քան տալիս է: Այն ավելի հաճախ է ստեղծում նոր խնդիրներ, քան լուծում է հները: Այսօր աշխարհը կարիք ունի ոչ թե նոր ռազմաճակատների, այլ՝ նոր կամուրջների: Կարիք ունի ոչ թե հաղթանակի պաշտամունքի, այլ՝ մարդկային կյանքի արժեւորման: Կարիք ունի խաղաղության:

Եվ եթե Իրանի ու Միացյալ Նահանգների միջեւ ձեռք բերված համաձայնությունը դառնա երկարատեւ ու համապարփակ խաղաղության սկիզբ, ապա այն կարելի է համարել ոչ միայն երկու պետությունների, այլեւ ողջ մարդկության հաղթանակը: Մնում է հուսալ, որ նույն ճանապարհով մի օր կավարտվեն նաեւ աշխարհի մյուս արյունալի հակամարտությունները, այդ թվում՝ ռուս-ուկրաինական պատերազմը: Որովհետեւ պատմությունը բազմիցս ապացուցել է մի պարզ ճշմարտություն. ամենավատ խաղաղությունն ավելի լավ է, քան ամենահաջողված պատերազմը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Գետահովիտցին դատախազությանը դատի է տվել

Իջեւան քաղաքին հարակից Գետահովիտ գյուղի բնակիչ, 1975թ. ծնված Մուկուչ Ենգիբարյանը 2026թ. ապրիլի 10-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ գույքն արգելանքից հանելու պահանջով: Ապրիլի 18-ին դատարանի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է դատարանի վարույթ: ՀՀ գլխավոր դատախազությունն օրենքով սահմանված ժամկետում հայցադիմումի պատասխան գրավոր դիրքորոշում կամ առարկություն չի ներկայացրել: Հունիսի 10-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում կայացած նախնական դատական նիստում դատավոր Վարդուհի Պապիկյանը որոշել է այդ քաղաքացիական գործով կայացնել ապացուցման պարտականությունը բաշխելու որոշում՝ գործի համար նշանակություն ունեցող փաստեր սահմանելով «Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենան եւ մի քանի այլ անշարժ գույք Մուկուչ Ենգիբարյանին պատկանելու փաստը, քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայցի եւ գույքի հնարավոր բռնագանձումն ապահովելու համար Մուկուչ Ենգիբարյանին պատկանող այդ անշարժ գույքերի վրա արգելանք/կալանք կիրառված լինելու փաստը, քրեական գործով կիրառված արգելանքը/կալանքը վերացնելու փաստական եւ իրավական հիմքերի առկայության փաստը եւ այլն: Սույն գործով նախնական դատական հաջորդ նիստը նշանակված է հուլիսի 8-ին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՅԴ ՆԱՄԱԿՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ Է ՄԵՐ ԵՐԿՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՁԳՏՈՒՄԸ

«Հրապարակը» զրուցել է Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) փոխտնօրեն, արտաքին հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Մաքսիմ Պալամարչուկի** հետ:

- Զելենսկու բաց նամակը՝ ուղղված Պուտինին, մեծ իրարանցում է առաջացրել: Ուկրաինայի նախագահն առաջարկել է ՌԴ առաջնորդին՝ դեմառդեմ հանդիպել՝ պատերազմին վերջ տալու համար: Նշել է, որ պատերազմի գինը կարող է բարձրանալ Ռուսաստանի համար՝ նկատի ունենալով այդ երկրի շարունակական եւ հատկապես մարդկային կորուստները: Նաեւ առաջարկել է՝ կրակը դադարեցնել շփման գծում: Ինչո՞ւ հիմա, եթե վստահ է, որ Ուկրաինան հաջողություններ ունի մարտադաշտում:

- Ուկրաինայի նախագահի նամակի հրապարակումն արտացոլում է մեր երկրի խաղաղության ձգտումը: Ռազմաճակատում իրավիճակի բարելավումը եւ Ռուսաստանի տարածքի խորքում գտնվող թիրախների դեմ հարվածների ինտենսիվացումը չեն նշանակում, որ Ուկրաինան բարձր գին չի վճարում շարունակվող ռազմական գործողությունների համար: Հաշվի առնելով, որ հակամարտության զուտ ռազմական լուծման հավանականությունը փոքր է, պատերազմի երկարաձգումը քիչ ռազմավարական իմաստ ունի: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի նախագահի արձագանքը ցույց տվեց նրա՝ պատերազմը դադարեցնելու անպատրաստ լինելը:

- Նաեւ հանդիպմանը պատրաստ չլինելը: Պուտինն ասաց, որ իմաստ չի տեսնում այս պահին՝ հանդիպել Զելենսկու հետ, տարակուսանք է հայտնել, թե ինչու է Ուկրաինայի առաջնորդը կամենում ԱՄՆ-ին զրկել Կիեւի համար կարեւոր համաձայնագրերի երաշխավոր լինելու իրավունքից: Իրո՞ք Զելենսկին նման ցանկություն ունի, մանավանդ որ վերոնշյալ նամակում նա ակնարկել է Թրամփի վարչակազմի կողմից Իրանի պատճառով Ուկրաինայում պատերազմը երկրորդ պլան մղելու մասին:

- Հաշվի առնելով Պուտինի՝ պատերազմը դադարեցնելու անպատրաստ լինելը, նրա հայտարարությունները նպատակ ունեն շեղել ուշադրությունն այս հիմնական հարցից եւ լարվածություն առաջացնել Ուկրաինայի եւ Միացյալ Նահանգների միջեւ: Ուկրաինան հետաքրքրված է ԱՄՆ-ի՝ ռազմական գործողությունները դադարեցնելու ջանքերով եւ Ամերիկայի՝ որպես ձեռք բերված պայմանավորվածությունների երաշխավորի դերով:

- Բայց չէ՞ որ Թրամփը հայտարարեց, որ Մոսկվան եւ Կիեւն ինքնուրույնաբար լուծեն խնդիրները՝ ըստ էության դեմ չլինելով աստիճանաբար նվազեցնել ԱՄՆ-ի միջնորդական դերը: Արդյո՞ք այս ամենը պատերազմի նոր ու ավելի դաժան փուլի մասին չի վկայում, հատկապես, երբ կողմերը հայտարարում են իրենց հաջողությունների մասին: Ո՞րն է ելքը, հեռանկարը:

- ԱՄՆ նախագահի հայտարարությունը պետք է դիտարկել ներքաղաքական գործընթացների համատեքստում: Նա ընդլայնում է իր մանեւրելու տարածքը՝ խուսափելու ընդդիմության կողմից ռազմական գործողությունների շարունակման դեպքում ձախողման մեղադրանքներից: Եթե համաձայնություններ ձեռք բերվեն, ԱՄՆ նախագահն ակտիվորեն կմիանա գործընթացին:

Արա ԱԼՈՅԱՆ

Ռուսաստանցիների որ մասն է իրեն համարում հայրենասեր եւ ինչու

Ռուսաստանցիների մեծ մասն իրեն համարում է հայրենասեր, սակայն չի ցանկանում, որ պետությունը սահմանի, թե ինչ բան է հայրենասիրությունը: Այս մասին վկայում են Հանրային կարծիքի հիմնադրամի կողմից այս տարվա մայիսի վերջին անցկացված սոցհարցման տվյալները: Ըստ այդմ, ռուսաստանցիների 85 տոկոսը կարծում է, որ ինքը հայրենասեր է: Իրենց հայրենասեր չի համարում հարցվածների 10 տոկոսը: 22 թվականի համեմատությամբ՝ այդ ցուցանիշը գրեթե չի փոխվել: Հարցվածների 65 տոկոսը կարծում է, որ հայրենասեր լինել կամ չլինելը մարդու անձնական գործն է: Միայն հարցվածների 30 տոկոսն է վստահ, որ հայրենասիրությունը երկրի բոլոր քաղաքացիների համար պետք է լինի պարտադիր:

Վերջին չորս տարում այս ցուցանիշներում էլ էական տեղաշարժեր չեն եղել: Հարցումները ցույց են տվել, որ ռուսաստանցիների մոտ հայրենասեր լինելու չափանիշները բավականին խստացել են: Հարցվածների 48 տոկոսի կարծիքով՝ հայրենասերը կարող է քննադատել իշխանություններին: Այն, որ հայրենասերը չի կարող քննադատել իշխանություններին, կարծում է հարցվածների 45 տոկոսը: 66 տոկոսը կարծում է, որ հայրենասերը չի կարող խուսափել բանակային ծառայությունից: Ուշագրավ է այն, որ այս հարցի հետ կապված՝ 24 թվականին հարցվածների 70 տոկոսն էր կարծում, թե հայրենասերը չի կարող խուսափել բանակային ծառայությունից: Հաջորդ հարցը, որ ռուսական միջավայրում կապվում է հայրենասիրության հետ, վերաբերում է արտասահմանում աշխատելուն: Հարցվածների 53 տոկոսի կարծիքով, եթե մարդն աշխատելու համար մեկնում է արտասահման, չի կարող համարվել հայրենասեր: 38 տոկոսը հակասություն չի տեսնում հայրենասիրության եւ արտասահմանում աշխատելու միջեւ: Ամփոփելով տվյալները, մասնագետները նշում են, որ հասարակության՝ հայրենասիրության օրակարգի շուրջ համախմբման հնարավորությունները սկսում են սպառվել: Չնայած ռուսաստանցիների ճնշող մեծամասնությունը համարում է իրեն հայրենասեր, սակայն քչերն են համաձայն, որ հայրենասիրությունը պետք է սահմանվի պետության կողմից եւ ըստ այդմ էլ՝ դառնա դասակարգման կատեգորիա: Ռուսաստանցիներն իրենք են ցանկանում հայրենասիրության իրենց պատկերացումներով առաջնորդվել: Մյուս կողմից, ռուսաստանցիների համար աստիճանաբար այլեւս ընդունելի չեն դառնում պարտադրական կամ վարչահրամայական մեխանիզմները՝ հայրենասիրությունից մինչեւ ինքնության պաշտպանություն:

ՀԱՅՑ

ՊՆ-Ի ԴԵՄ ԲԱԶՄԱԹԻՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԵՐ ԵՆ ՏԱՐԵԼ ԴԱՏԱՐԱՆ

«Դատալեքս» տեղեկատվական համակարգից տեղեկացանք, որ տասնյակ ՍՊԸ-ներ դատական հայցեր են ներկայացրել պաշտպանության նախարարության դեմ: «Գառնի-Լեռ գիտաարտադրական միավորում» ԲԲԸ-ի, «Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերության, «Արագած» ՍՊԸ-ի, «Եվրոասֆալտ ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի, «LS Պիրկալ» ՓԲԸ-ի, «ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի, «Է-Հայք» ՍՊԸ-ի, «Ռաբբեր ընդ հայվեյ» ՍՊԸ-ի ներկայացրած հայցերի մասին Դատալեքսում տեղեկատվությունը փակ է: Փորձեցինք մի քանի ՍՊԸ-ից իմանալ, թե ինչ հայցով են դատարան դիմել:

«Էլ Թեք Քոմփ» ՍՊԸ-ն, որը հայկական տեխնոլոգիական ընկերություն է, հիմնադրվել է 2010 թվականին, մասնագիտացված է էլեկտրոնային սարքավորումների նախագծման, արտադրության եւ վաճառքի ոլորտում, դատական հայց է ներկայացրել ՊՆ-ի դեմ: Ընկերության տնօրեն Սուրեն Ավագյանը մեզ հետ զրույցում չմանրամասնեց, թե ինչ հայց են ներկայացրել. «Եկեք՝ այս հարցին չպատասխանեմ»: Իսկ ո՞վ կպատասխանի: «Այդ հարցով Ձեզ ոչ ոք չի պատասխանի, բացի ինձնից»: Մենք ինֆորմացիա ունենք, որ տասնյակ ՍՊԸ-ներ ՊՆ-ից գումարի պահանջով դատարան հայց են ներկայացրել, Դուք նույնպե՞ս: «Բնականաբար, գումարի պահանջ եւս կա, ավելի ոչինչ չեմ կարող ասել, բերեք՝ ես չմանրամասնեմ, քանի որ փակ դատական գործ է»:

«Արագած» ՍՊԸ-ն, որը զբաղվում է ռազմական եւ պաշտպանական տեխնիկայի արտադրությամբ, եւս դիմել է դատարան: Ընկերությունից մեզ ասացին. «Միայն գումարի պահանջ չէ, այստեղ ուրիշ խնդիր է, մեր պահանջը չեղարկել են, ստրուկտուրա են փոխել, դրա պատճառով ո՛չ մենք ենք կարողացել հանձնել, ո՛չ էլ իրենք՝ ընդունել: Բոլորի հետ է այդ խնդիրը, դա կառավարությունն է փոխել: Շատ բան չեմ կարող Ձեզ ասել, ուղղակի՝ մի հիմար քարը գցել է փոսը, հազար հոգի չեն կարող հանել. այդ սկզբունքն է գործում, մնացած մանրամասների համար դիմեք ՊՆ, ավելին չենք կարող ասել»:

Ի դեպ, Սուրեն Պապիկյանի ղեկավարած կառույցում դժգոհությունների ալիք է բարձրանում: Մի կողմից՝ նախարարն իր իսկ արձակած հրամանը չի կատարում, եւ նախկին սպաներն ու զինվորականները դատական հայցեր են ներկայացրել նախարարի դեմ: Ֆեյսբուքյան որոշ օգտատերեր էլ անմիջական դիմում են նախարարին՝ տարբեր հարցեր բարձրացնելով: Օգտատերերից մեկը գրել է. «Պարոն Պապիկյան, ինչո՞ւ է պայմանագրային զինծառայողների գումարը պակաս գալիս՝ այն դեպքում, երբ Դուք խոստացել էիք մայիսից տալ չվճարված գումարները»: Սերինե Կիրակոսյանը գրում է. «Նախ պայմանագրային զինծառայողների աշխատավարձերը նորմալ տվեք: Արդեն յոթ ամիս է՝ հատուկ զորքի գումարները չեք տալիս: Միայն Դուք եւ Ձեր երեխանե՞րն են ապրել ուզում: Այդ աշխատող տղաներն էլ են ընտանիք պահում՝ իրենց կյանքի ու առողջության հաշվին, հերիք է ժողովրդին հիմարի տեղ դնեք»: Հասմիկ Սաֆարյան. «Աշխատավարձերը վերանայեք, վարորդները 120 հազար դրամ են ստանում»: Կարինե Մխիթարյան. «Պարոն նախարար, Դուք ինչո՞ւ չեք հետաքրքրվում այն զոհված զինծառայողների ընտանիքներով, որոնց թոշակներն այսքան տարի չեն փոփոխվել, մենք ստանում ենք 30 000 դրամ»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս օրերին ընթացող ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերը գլոբալ սպորտային կյանքում կարեւորագույն իրադարձություն են համարվում: Իսկ ինչպես է աշխարհի խոշորագույն սպորտաձեւ համարվող ֆուտբոլն արտացոլվել գեղարվեստական գրականության մեջ: Ընդ որում, ի սկզբանե ասենք, որ պոեզիայում այն ավելի հազվադեպ է ներկա, քան՝ արձակում:

Արձակում ֆուտբոլը դարձել է լիարժեք գրական ֆենոմեն, որը թույլ է տալիս գրողներին եւ ուսումնասիրողներին՝ բացահայտել այս սպորտաձեւը՝ որպես գրական ուսումնասիրության նյութ: Շատ գրողների համար ֆուտբոլը ոչ այնքան ստեղծագործական պատում ստեղծելու ներշնչանք է, որքան կյանքի ձեւ, մոդել: Ֆուտբոլային հանդիպումը շատ հեղինակների համար դառնում է սոցիալական կոնֆլիկտների արտացոլման հարթակ, իսկ մարզիկի ճակատագիրը մարդու՝ ժամանակակից աշխարհում ունեցած ճակատագրի մետամորֆոզների դրսեւորում: Այս ամենը հատկապես վառ է արտահայտված լատինաամերիկյան գրականության մեջ, որտեղ ֆուտբոլն ազգային ինքնագիտակցության մաս է դարձել: Ուրուգվայցի գրող, լրագրող Էդուարդո Գալեանոն իր հայտնի աշխատությունը նվիրել է ֆուտբոլին: Դա վեպ է ոչ այնքան վեպի ավանդական ընկալման մեջ, որքան էսսեների, մանրապատումների եւ մտորումների ժողովածու, որտեղ ֆուտբոլը ներկայացված է որպես սոցիալական եւ մշակութային ֆենոմեն: Գալեանոն ցույց է տալիս, թե ինչպես է ֆուտբոլային խաղն արտացոլում մարդկային հույզերն ու ապրումները: Առաջնությունների, հայտնի ֆուտբոլային հանդիպումների միջոցով նա փորձում է ուսումնասիրել ընդհուպ մինչեւ մարդկության պատմության զարգացման ընթացքն ու շրջադարձերը:

Ժամանակակից ֆուտբոլը ծնվել է Անգլիայում, եւ, բնականաբար, բրիտանական արձակը չէր կարող շրջանցել աշխատավոր դասակարգի այս սպորտաձեւը: Այստեղ ամենահայտնի գործերից մեկը Նիք Հորնբիի «Ֆուտբոլային տենդն» է: Չնայած գործը համարվում է ինքնակենսագրական, սակայն վաղուց համարվում է աշխարհի խոշորագույն մարզաձեւի մասին եղած ամենահայտնի տեքստերից մեկը: Հորնբին ներկայացնում է իր բազմամյա կապվածությունը «Արսենալ» ակումբի հետ: Նա ցույց է տալիս, թե ինչպես է սպորտային երկրպագու լինելը դառնում կյանքի, աշխարհայացքի, հուզականության մաս: Սեփական ապրումների միջոցով նա ներկայացնում է մասսայական մշակույթի եւ հավաքական ինքնության ֆենոմենները: Գիրքը զգալի ազդեցություն է թողել համաշխարհային սպորտային գրականության վրա: Շատ հեղինակների մոտ այս սպորտաձեւը դառնում է բիզնես եւ նույնիսկ՝ քաղաքական շահերի բախման կիզակետ, եւ նրանց ստեղծագործություններում արդեն ֆուտբոլը ներկայացվում է այդ բախման եւ պայքարի համատեքստում:

Բրիտանացի գրող Դեւիդ Փիսի տեսադաշտում իրական կերպար է՝ հայտնի մարզիչ Բրայան Քլաֆը: Նա ֆուտբոլային թեման օգտագործում է՝ ուսումնասիրելու հասարակության մեջ եղած խնդիրները՝ կապված իշխանության, հավակնությունների, հոգեբանական ճնշումների, հանրային ակնկալիքների հետ: Այստեղ արդեն մարզաձեւը դառնում է յուրատեսակ համակարգ, որտեղ մարզիչներն ու մարզիկները ստիպված են լինում պայքարելու ոչ միայն մրցակիցների, այլ նաեւ՝ սեփական վախերի, ինտրիգների եւ հանրային կարծիքի դեմ:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԲԱԼԱՆՍԻՐՈՎՀՇՅԻԿԸ ԿՈՐՑՐԵԼ Է ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԸ

Փաշինյանը հերթական լայվով նախանշում է իր առաջիկա անելիքը, եւ դա Հայաստանի տնտեսության զարգացումը չէ, երկրում իր իսկ կողմից խրախուսվող հանրային թշնամության եւ անհանդուրժողականության հաղթահարումը չէ, Հայաստանի հարաբերությունների կարգավորումը չէ՝ իր

տնտեսական հիմնական գործընկերոջ հետ, այլ բռնաճնշումների եւ ունեզրկման քաղաքականությունը շարունակելու մասին հայտարարություն է՝ էլ ավելի մեծ թափով եւ ջանասիրությամբ: Հայաստանում այլեւս չեն լինելու հարուստներ եւ աղքատներ, չի լինելու միջին խավ, լինելու են համատարած աղքատություն եւ նրանց վրա իշխող մի խումբ մարդիկ՝ իր գլխավորությամբ: «Առաջիկա մեր քաղաքական առանցքային օրակարգը չի կարող լինել այլ բան, քան պատերազմի եռագլուխ կուսակցությանը բառիս բուն իմաստով ունեզրկելը, սրանք պետք ա հացին կակա ասեն, որ մտքներով չանցնի այլեւս ընտրակաշառք բաժանել: Սա ա քաղաքական օրակարգը, եւ էս առումով հեղափոխությունն այլեւս չի կարող լինել թավշյա»,- իր լավում ասել է Փաշինյանը:

Այսպես կոչված, պատերազմի եռագլուխ կուսակցությանն ունեզրկելու ցանկությունն ունի մի քանի պատճառ: Ահա դրանցից ամենակարեւորները:

1. Փաշինյանը տեսավ, որ հայ հասարակության առնվազն կեսը, իսկ իրականում՝ անհամեմատ ավելի մեծ մասը, վստահության քվեն տվեց Սամվել Կարապետյանի, Ռոբերտ Քոչարյանի, Գագիկ Ծառուկյանի գլխավորած կուսակցություններին, չլինեին իր կողմից կազմակերպված ընտրակեղծիքները եւ բռնաճնշումները, նրանք ստացել էին մեծամասնություն եւ ձեւավորել էին կառավարություն: Երբ Փաշինյանը խոսում է նրանց ունեզրկելու մտադրության մասին՝ ասելով, որ նրանք այլեւս մտքով չանցկացնեն ընտրակաշառք բաժանել, նկատի ունի հետագա քաղաքական պրոցեսներին նրանց, այդ թվում ընտրություններին մասնակցելուց, իրեն եւ իր խունտային դիմադրելու հնարավորությունից զրկելը, այդ թվում եւ՝ ֆինանսական:

2. Փաշինյանը գիտի, որ իր գործունեության արդյունքում Հայաստանը մատնվել է տնտեսական աղետի, դրա հետեւանքները դեռեւս ակնառու չեն, բայց շատ շուտով ավելի ու ավելի ակնհայտ կդառնան, հարյուր հազարավոր մարդիկ զրկվելու են աշխատանքից, եկամտից եւ ապրելու տարրական հնարավորությունից: Ինքն անընդունակ է լուծել այդ մարդկանց խնդիրները, ընդհակառակը՝ խնդիրների աղբյուրը հենց ինքն է: Բայց կարող է այդ հարյուր հազարավոր մարդկանց համար սփոփանքի աղբյուր ստեղծել՝ աղքատացնել նաեւ այլ մարդկանց, ովքեր դեռ ոտքի վրա են: Ուրախացեք, որ միայն դուք չեք աղքատ, աղքատությունը համատարած է. ահա նրա հիմնական անելիքը: Փաշինյանը չի կարող այնքան փող խլխլ Կարապետյանից, Քոչարյանից կամ Ծառուկյանից, որ դրանով կարողանա փոխհատուցել աղքատացող գյուղացիներին, արտահանողներին, վերամշակողներին: Բացի դա, ինչո՞ւ պետք է իր խլած փողն ուրիշին տա, եթե կարող է պահել իրեն: Բայց մտածում է, որ մարդիկ կարող են բավարարված լինել ուրիշների աղքատացմամբ՝ «ընկերովի մահը հարսանիք է» տրամաբանությամբ:

3. Կարապետյանը, Քոչարյանը, Ծառուկյանը ոչ միայն Փաշինյանի քաղաքական հակառակորդներն են, այլեւ՝ Հայաստանի թուրքացման օրակարգի հակառակորդները, դրա դեմ դիմադրության եւ պայքարի կազմակերպիչները: Քանի դեռ նրանք կան եւ գործունեություն են ծավալում, Հայաստանի թուրքացման օրակարգի առաջմղումը հանդիպելու է կոշտ դիմադրության: Հայտարարելով նրանց ունեզրկելու իր մտադրության մասին՝ նա Ադրբեջանին եւ Թուրքիային ասում է, որ ինքը շարունակում է հետեւողական լինել Հայաստանի թուրքացման հարցում, ոչնչացնում է այդ օրակարգի հակառակորդներին, եւ ոչ մի շեղում այդ օրակարգից չի լինելու:

4. Կարապետյանը, Քոչարյանը եւ Ծառուկյանը նախընտրական շրջանում հանդես էին գալիս Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ հավասարակշռություն պահելու, Հայաստանը հակառուսական հարթակ չդարձնելու եւ Հայաստանը ԵԱՏՄ անդամի կարգավիճակից չզրկելու դրույթներով: Հայտարարելով նրանց ունեզրկելու մտադրության մասին՝ Փաշինյանը հայտարարում է, որ շարունակում է հակառուսական քաղաքական կուրսը եւ Հայաստանը հակառուսական հարթակ, Ռուսաստանի թշնամի դարձնելու քաղաքական գիծը: Նա, ըստ էության, ոչնչացնում է Հայաստանում Ռուսաստանի բարեկամ քաղաքական գործիչներին եւ նրանց կողմից ղեկավարվող քաղաքական ուժերին:

Պատահական չէ, որ խորհրդարանական ընտրություններից ընդամենը մեկ շաբաթ հետո Հայաստան է գալիս Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական, իր հակահայկական հայտարարություններով հայտնի Հիքմեթ Հաջիեւը, իսկ նույն օրը Լուքսեմբուրգում ՀՀ արտգործնախարար աշխատող Արարատ Միրզոյանը մասնակցում է ԵՄ անդամ երկրների ԱԳ նախարարական խորհրդի նիստին՝ այնտեղից սպառնալիքներ եւ հաթաթաներ հնչեցնելով Ռուսաստանի հասցեին:

Այս ամենը ցույց է տալիս, որ բալանսիրովշչիկը վերջնականապես կորցրել է հավասարակշռությունը եւ ուղիղ անցում է կատարում դեպի Հայաստանի թուրքացում, եվրոպական փաթեթավորմամբ ծրագրի իրականացում: Բնական է, որ նման պայմաններում դրա դեմ հանդես եկողները պետք է հայտարարվեն թշնամիներ, ովքեր ենթակա են ունեզրկման եւ ոչնչացման:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ



Հարգելի եւ անմոռանալի Վլադիմիր Վլադիմիրովիչ

Աշխարհի ծագերից շնորհավորական ուղերձներ են գլխիս թափվում: Միայն Դուք եք լռում: Վիրավորված եմ: Ի վերջո, երկու հարյուրից ավելի հեռախոսազրույց ենք ունեցել, սեղան ենք նստել՝ թաս թասի խփել: Դժվար է հեռախոս վերցնել՝ Ձեր գործընկեր Նիկոլ Վովաեւիչին շնորհավորել: Հասկանալի է՝ դա բառերի փունջ է, բայց քաղաքականության մեջ բառերն ավելի թանկ են, քան՝ բանակները: Մի քանի բառ, եւ մեր լրատվամիջոցները գիտեն, թե ոնց բացատրեն ժողովրդին, որ դա պատմական իրադարձություն է:

Կասկածում եք ընտրությունների արդյունքներին: Այն անցել է մեզ հատուկ ժողովրդավարության ավանդույթներով: Բողոքում են, դատարաններ են դիմում, թվեր են համեմատում, քվեներ վերահաշվում: Դուք էլ գիտեք՝ քաղաքականության մեջ որոշիչը հայտնաբերված սխալը չէ, այլ՝ այն, թե ով է հաշվողն ու որոշողը՝ սխալը սխալ է, թե՝ ոչ: Չէ՞ որ վերջում սխալ գտնողներն են սխալ դուրս գալիս: Պետությունն է որոշում, թե որն է ճշմարտությունը: Պետությունն էլ, բարեբախտաբար, ես եմ:

Մենք մեր քաղաքացիներին տվել ենք ազատություն: Նրանք ազատ էին ընտրել՝ ինչ առաջարկել էինք: Ժողովրդավարությունն այն համակարգն է, որտեղ բոլորի կարծիքը լսվում է, բայց որոշիչ է մնում ճիշտ կարծիքը: Ինձ մեղադրում են, թե հասարակությունը բաժանվել է մասերի: Մի մասը սիրում է ինձ, մյուս մասը չի սիրում: Այսինքն՝ հասարակության երկու հատվածն էլ զբաղված է ինձնով: Ավելի մեծ ազգային համախմբում չի կարող լինել:

Պողպատե մանդատը շատ հետաքրքիր բան է: Սկզբում այն տրվում է ժողովրդի կողմից, հետո արդեն մանդատն է բացատրում բոլորին, թե «ո՞վ է ինքը»: Ես անկեղծ կխոսեմ մեր ընդհանուր ռազմավարական հաջողությունների մասին: Երեք հարյուր տարի շարունակ Հայաստանը ծանր բեռ է եղել Ռուսաստանի ուսերին: Ամեն սերունդ մի նոր խնդիր է ստեղծել. անվտանգություն, սահմաններ, պատերազմներ, դաշնակցային պարտավորություններ, Ղարաբաղ: Ես որոշել եմ այդ անարդարությունը քոքից վերացնել: Ղարաբաղի հարցը փակված է: Հիմա նույն հետեւողականությամբ առաջ ենք շարժվում մյուս ուղղություններով: Արդյունաբերությունն էլ չի շնչում: Գյուղատնտեսությունը դառնում է պատմական հիշողություն: Բանակի մասին քաղաքացիներն անցյալ ժամանակով են խոսում: Հաջողվել է ձեւավորել համընդհանուր կասկածի մթնոլորտ: Պետական ինստիտուտները դարձել են այնքան ճկուն, որ ցանկացած քաղաքական քամու ուղղությամբ թեքվում են: Ուրիշները քանդում են դարերով, մենք դա արեցինք մի քանի տարում:

Եթե վաղը Հայաստանը վերածվի հերթական դատարկ տարածքի, Ռուսաստանը ստիպված չի լինի մտածել Հայաստանի անվտանգության մասին: Եթե հայերը շարունակեն հեռանալ հայրենիքից, նրանք կհարստացնեն տարբեր երկրների աշխատաշուկաները: Մեծ մասը կտեղափոխվի ՌԴ: Աշխատասեր են, խելացի, հարմարվող: Օգտակար քաղաքացիներ են: Հայաստանից դուրս նրանք շատ ավելի քիչ անհարմարություններ կստեղծեն: Հետեւաբար, խնդրում եմ իմ գործունեությունը դիտարկել ոչ թե որպես հակառուսական, այլ բացառիկ ռուսամետ: Ես ոչ թե բարդացնում եմ Ռուսաստանի կյանքը, այլ ազատում եմ հայկական հարցից: Վլադիմիր Վլադիմիրովիչ, օգնեք ինձ, գազը թանկացրեք, ապրանքաշրջանառությունը կրճատեք, մաքսատուրքերը բարձրացրեք: Դրանք այլեւս վտանգավոր չեն մեր ծրագրերի համար: Վտանգավոր կլինեին, եթե մեր նպատակը հայկական պետության հզորացումը լիներ: Բայց այդպիսի նպատակ, բարեբախտաբար, չունենք եւ չենք ունեցել: Այնպես որ՝ շնորհավորեք ինձ:

Ձեզ միշտ նվիրված՝ Նիկոլ Վովաեւիչ

Գրառեց Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆԸ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 16.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am